


1021

THE  
MUSGRAVE  
LIBRARY

1905





Ein, Einiges wenige Auf dem Platz  
Gutachten über den Vermögensstand

no

no

no

Einiges wenige  
Gutachten

Einiges wenige

10/23  
1905

Proven





ՄԻՋԻՆ ԵՒ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴԱՍԸՆԹԱՅՔ

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

Օ Ս Մ Մ Ա Ն Ե Ա Ն

Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ի Ի Ն

Ի Պ Է Տ Ս

Ա Ջ Գ . Ն Ա Խ Ա Կ Ր Թ Ա Կ Ա Ն Վ Ա Ր Ժ Ա Ր Ա Ն Ա Յ

Գ Ր Ե Ց

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ

ՈՒՍՈՒՅԻՉ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԵՒ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ



Բ. Տ Ի Պ


معارف عمومية نظارت جلیله سنه ۲۹ رجب ۳۲۲ و ۲۶  
ایلول ۳۲۰ تاریخلی و ۵۰۲ نومرولی رخصتنامه سیله طبع اولتمشدر



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Մ. ՍԱՐԸԵԱՆ

1905







ՀԱՆԳՈՒՑԵԱԼ

ԱԶՆՈՒԱՓԱՅԼ ՏԻԿԻՆ ԿԱԼԻՆԻԿ

Վ.ՍԵՄ. ԶԵՆՈՒՄ ՊԷՅ ՄԷՐԱՄԷԹՃԵԱՆԻ

ՅԻՇԱՏԱԿԻՆ ՆՈՒԻՐԷ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՂՆ

Ի ՆՇԱՆ ԽՈՐԻՆ ՄԵԾԱՐԱՆԱՅ

1 Օգոստոս 1889



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ

ՄԱՍԻՍԻ ՄԱՍԻՍԻ ՄԱՍԻՍԻ

ՄԱՍԻՍԻ ՄԱՍԻՍԻ ՄԱՍԻՍԻ

ՄԱՍԻՍԻ ՄԱՍԻՍԻ

ՄԱՍԻՍԻ

ՄԱՍԻՍԻ ՄԱՍԻՍԻ



Վ Ա Ի Ե Ր Ա Պ Ի Ր

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Զսարեւոյ Օսմանեան Պատմութեան Գրիգոր  
Էֆենտի Մարգարեան, յաղագս հեղութեան դի-  
պաց եւ անցից, յսակութեան լեզուի եւ դիւ-  
րուսոյց եղանակի, որպէս վկայեցին քննիչք,  
եւս եւ հարազատ հետեւողութեան պատճառակաւ  
Յայտագրի Ուսումնական խորհրդոյս, արժանի  
ընդունելութեան համարիմք յազգային Նախա-  
կրթարանս, ի պէս Գ. եւ Գ. դասուց :

( ԿՆԻՔ )

Մ Ա Յ Տ Ե Մ Ե Մ Ե Մ

ՄԱՆՈՒԿԱՆՈՒՄԻ ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

Գրքերու Գովարձանք Գովարձանք Գրքերու  
 Կրթական Կարգադրանք, Կարգադրանք Կրթական  
 Կրթական Կարգադրանք, Կարգադրանք Կրթական  
 Կրթական Կարգադրանք, Կարգադրանք Կրթական  
 Կրթական Կարգադրանք, Կարգադրանք Կրթական  
 Կրթական Կարգադրանք, Կարգադրանք Կրթական  
 Կրթական Կարգադրանք, Կարգադրանք Կրթական

( ԳՐԱԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ )

ԿՈՄԻՏԵ ԿՈՄԻՏԵ ԿՈՄԻՏԵ

# Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

## Բ. Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն



Մեր սոյն անդրանիկ աշխատասիրութեան  
Ա. սպազրուքիւնը շատնց ապառաժ ըլլալով՝  
եւ միւս կողմանէ եղած խնդրանքներու կարե-  
նայ գոհացում տալու նպատակաւ, ձեռնարկեցի  
անոր Բ<sup>ր</sup> սպազրուքեանը :

Այս առթիւ հարկ սեպեցի՝ շեղուի եւ պա-  
րունակութեան մասին ինչ ինչ փոփոխութիւն-  
ներ ներմուծել : Յուսով եմ թէ գործիս այս  
Երկրորդ սպազրուքիւնն ալ իր նախորդին ֆա-  
ջաշերտակաւ ընդունելութեանը կ'արժանանայ :

Գ. Մ.





## Յ Ա Ռ Ա Ձ Ա Ք Ա Ն

### Ա. Տ Պ Մ. Գ. Բ Ո Ւ Թ. Ե Ա Ն

Ուսանիլ ընդհանուր մարդկութեան, այլ մանաւանդ  
իւր կենակից եւ սիրող ազգին կեանքն՝ իբր լրացուցիչ  
մասն իւր պատմութեան, հարկ մ'է կարելուր եւ անհրաժեշտ:

Աւելորդ է ըսել թէ, մեզ համար սոյն աւագ կարելորու-  
թիւնն ունի Պատմութիւնն Օսմանեան ազգին՝ որոյ հետ Հայ  
ժողովրդեան մի ստուարագոյն մասն, վեց երկար դարերէ  
հետէ այնքան համերաշխութեամբ կը կենակցի եւ իւր ան-  
ժրխտելի հաւատարմութեան ու առ Տէրութիւնն մատուցած  
արդիւնաւոր ծառայութեանցն համար՝ ընդ միտք արժանի  
եղած է Օգոստափառ եւ Մեծագոր Սուլթաններու անգին  
շնորհացն ու բարձր գնահատմանց :

Համոզուած սոյն բացայայտ նշմարելութեան, եւ մաս-  
նաւոր առաջարկութեամբ Պատմ. Ուսումնական Խորհրդոյ,  
պատրաստեցի սուղ միջոցի մէջ ներկայ Համալոս Դասա-  
գիրքն՝ ի պէտս Ա.զգ. Նախակրթական վարժարանաց :

Ձանացի՝ ըստ կարի պարզ եւ ամփոփ նկարագրել,  
հետեւելով գլխաւորաբար այն Օսմանցի մասնագիտաց՝ որոց  
դասական գործերն ընդունուած են ընդհանրապէս՝ *Իպթի-  
սաիեէ* եւ *Րիշտիյե* վարժարանաց մէջ :

Առ ի դիւրութիւն՝ իւրաքանչիւր Վեհապետի գահա-  
կալութիւնը թէ՛ Հինդէթի եւ թէ՛ Քրիստոսի թուականներով  
նշանակած եւ մէն մի Գլխոյ վերջն *Հարցարաններ* դրած

Էմ: Բաց առի, յաւարտ գործոյս՝ պատշաճ դատեցի յաւե-  
լուլ անուանեն Օսմ. Սուլթաններու ժամանակակից երեւելի  
Վեզիրներու, նոյնպէս *Հնդհանուր* մի *Հարցարան*՝ գոր  
Պատ. Ուսուցիչք կրնան աւելի բնդլայնել՝ եթէ յաւագոյն  
համարին :

Այս է անա պարզագոյն նկարագիրն հասնես եւ անդ-  
րանիկ աշխատասիրութեանս որ՝ եթէ արժանանայ Պատ.  
Ուսուցչաց եւ Խնամակալաց ներդասիս գնահատման,  
պիտի լինի ինձ ֆաջալեր՝ տակաւ սոյնօրինակ աշխատասի-  
րութեանց ձեռնարկելու :

**Գ. Մ.**

1 Օգոստոս 1889, Կ. Պոլիս :



# Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

## ՕՍՄԱՆԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ



### Մ Ա Ս Ն Ա.

ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԷՆ ՄԻՆՁԵՒ ԵԸԼՏԸՐԸՄ  
ՍՈՒԼԹԱՆ ՊԱՅԱԶԻՏԻ ՄԱՅԸ

( Հիմերի 699—804 Քրիստոսի 1299—1401 )

ԹՈՒԹԻԲ ԿԱՄ ՕՍՄԱՆՑԻ ազգին որրանն  
եղած է Կասպից ծովու և Չինական լեռ-  
ներուն մէջ աեղ տարածուած այն ընդար-  
ձակ աշխարհը, որ կը կոչուի Թուրքաստան  
կամ Թաթարիստան : Այս երկրէն էր ծին-  
կից խան մեծ աշխարհակալը, որ ժԳԻԳ Դարու  
սկիզբները, իր շրջակայ երկիրներուն ախրե-  
լէ ետեւ՝ բոլոր աշխարհը նուաճելու ելաւ :  
Թուրքաստանի իշխաններէն մին՝ Սիւլէյման  
Եան, չկրնալով այս ահարկու աշխարհակա-  
լին բռնութիւններուն տակալ, իր քառասուն  
հազարի չափ հաւատարիմ մարդիկներով  
գէպի արեւմուտք գաղթեց ու Էրզինկեանի

գաւառն ապաստանեցաւ : Ասոր մահուանէ  
յետոյ, որդին էրթողորոշ պէյ՝ իր ցեղակից  
քանի մը հարիւր ընտանիքներով Փոքր Ասիոյ  
արեւմտեան կողմերը յառաջանալով՝ եկաւ  
Բիւթանիա (այժմեան Խիւտավէնտիկեար  
կուսակալութեան մէջ) հաստատուեցաւ :

Այս միջոցին Փոքր Ասիոյ մէջ երեւելի էր  
Սեյճուզեան թուրքերու տէրութիւնն՝ որու  
մայրաքաղաքն էր Իկոնիոն կամ Գոնիա :  
Էրթողորոշ՝ որ ճարպիկ ու պատերազմափորձ  
իշխան մ'էր, թշնամի թաթար ցեղերու յար-  
ձակումներու դէմ Իկոնիոյ Ալաէսիկ Սուլ-  
թանին օգնելով՝ ի վարձատրութիւն իր  
ծառայութեան՝ ընդարձակ երկիրներ պար-  
զեւ ստացաւ անկից՝ և այսպէս թուրք  
ազգին ինքնակալութեան հիմունքը դրաւ :

### Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՞ր երկիրն եղած է թուրք կամ Օսմանյի  
ազգին որրանը. — Ո՞վ էր Սիւլէյման Շահ. —  
Ինչո՞ւ երզնկա դադթեց. — Ո՞վ յաջորդեց իրեն.  
— Էրթողրուլ ո՞ւր հաստատուեցաւ. — Փոքր  
Ասիոյ մէջ ո՞ր տէրութիւնը կար նոյն ժամանակ.  
— Ո՞րն էր անոր մայրաքաղաքը. — Էրթողրուլ  
ինչպէս յարաբերութեան մտաւ Իկոնիոյ Սուլ-  
թան Ալալայեատիին հետ. — Ի՞նչպէս հիմնեց  
թուրք ազգին ինքնակալութիւնը :



## ՕՍՄԱՆ Ա. ՂԱԶԻ

(Թուակսն Հիմրեթի 699 — Թուակսն Քրիստոսի 1298)

Էրթողրուլի յաջորդեց իր արիասիրտ և  
միառասէր արդին Օսման, որ Յունաց ձեռ-  
քէն շատ մը քաղաքներ առաւ, տէրութիւնն  
ընդարձակեց և իրեն մայրաքաղաքն ըրաւ  
Եէնիշէհիր: Երբ 1278ին Իկոնիոյ Սէլճուգ-  
եանց տէրութիւնը բողբոլին վերջացաւ՝ Օս-  
ման ալ այս առթիւ ընդարձակ և հարուստ  
կուսակալութիւններ նուաճելով՝ իր տէ-  
րութիւնն աւելի ընդարձակեց և զօրացուց:

Օսման իր իշխանութեան 14րդ տարին՝  
Պրուսան Յունաց ձեռքէն առնելով, զայն իր  
տէրութեան մայրաքաղաքն ըրաւ, զօրա-  
յը թոշակ կտայեց ու երկրին յառաջագի-  
մութեանը հոգ տարաւ:

Օսմանի անունով իր ազգն ՕՍՄԱՆՅԻ  
և տէրութիւնն ալ կոչուեցաւ ՕՍՄԱՆԵԱՆ:  
— Օսման 16 տարի իշխանութիւն վարեց:

### Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՞վ յաջորդեց էրթողրուլի. — Ո՞ր քաղաք-  
ներն առաւ Յունաց ձեռքէն. — Ո՞րն էր իր

մայրաքաղաքը . — Ինչպէս ընդարձակեց իր  
տէրութիւնը . — Ե՞րբ տիրեց Պրուսա քաղաքին .  
— Իր անուամբ ի՞նչ կոչուեցաւ իր ազգն ու  
տէրութիւնը :

---

## ՍՈՒԼԹԱՆ ՕՐԽԱՆ

(Թուական Հին. 726 — Թ. Քր. 1325)

Սուլթան Օսման Ա. ի կրտսեր որդին էր  
ՕՐԽԱՆ որ գահն ելածին պէս՝ իր երէց  
եղբայրը Ալաէտտին փաշան՝ Մեծ Եպարքոս  
(վէզիր) անուանեց : Ալայէտտին՝ տէրութիւ-  
նը արտաքին յարձակումներու դէմ պաշտ-  
պանելու նպատակաւ՝ կազմեց Եհնիէրի  
(նոր զօրք) կոչուած այն նշանաւոր զօրա-  
գունդն, որ թէև ՚ի սկզբան Օսմանեան պե-  
տութեան մեծ ոյժ տուաւ, սակայն ՚ի վեր-  
ջոյ իր նպատակէն շեղելով՝ վտանգաւոր  
տարր մը դարձաւ :

Սուլթան Օրխան օգուտ քաղելով Յունաց  
կայսրութեան տկարութենէն՝ հետզհետէ  
տիրեց Կեմշեյիկ, Նիկիա և Նիկոմիդիա քա-  
ղաքներուն : Իսկ 1356ին իր Սիւլէյման փաշա

որդին՝ սակաւաթիւ նաւերով Չանագ-Քա-  
լէէն անցաւ դիմաց՝ Եւրոպա և Յունաց  
ձեռքէն առաւ Տարսանեղ, Մաշկարա,  
Հայրապօղոս և Թեֆիրսուղ քաղաքները :

Սուլթան Օրխան՝ արի և բարեկարգիչ  
թագաւոր մ'էր : Իր անունով ստակ կո-  
խեց, ամէն տեղ դատաւորներ ( դատր )  
կարգեց և իմաստուն օրէնքներ դնելով՝  
մեռաւ Պրուսայի մէջ՝ 35 տարի թագա-  
ւորելէ յետոյ : Առաջին անգամ Սուրբանի  
տիտղոսն առնող Օսմանեան վեհապետն  
ասիկա եղած է :

### Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Օսմանի ո՞վ յաջորդեց. — Օրխան զո՞վ վե-  
ղիր կարգեց. — Ալաէտտին ի՞նչ կարգադրու-  
թիւններ ըրաւ. — Եէնիչէրիք ի՞նչ կարեւո-  
րութիւն ունեցան. — Ո՞ր քաղաքներուն տիրեց.  
— Օսմանցիք որ թուականին Եւրոպա անցան  
և ո՞ր քաղաքաց տիրեցին. — Օրխան ի՞նչ բա-  
րեկարգութիւններ ըրաւ :



## ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱՏ Ա.

( Թուական Հին. 726 — Թ. Քր. 1325 )

Սուլթան Օրխանի կրտսեր որդին և պատերազմասէր թագաւոր մ'էր Մուրատ Ա. որ իր իշխանութեան առաջին տարին Գասաղիք զսպելով՝ Անկուրիա քաղաքին տիրեց :

Այս թագաւորին ժամանակակից էին Լաշա Շահին փաշա, Էվրէնուս Պէյ, Չանսարըր Գարա Խաշիչ և Թիւնուր քաշ Պէյ նշանաւոր անձերը, որոնք նորահաստատ տէրութեան մեծամեծ ժառայութիւններ մատուցին :

Ասիոյ կողմը խաղաղեցնելէ ետեւ՝ Սուլթան Մուրատ իր զէնքը Եւրոպա դարձուց և տիրեց Էսիրնէ, Ֆիլիպէ, Կիւսիւզնիկէ, Եհնիճէ և Պուլկարիոյ քանի մը կարեւոր քաղաքներուն : Օսմանեաց այս անդուլ յառաջխաղացութենէն սարսափահար Սերպիոյ Լազար թագաւորը՝ Վալաքիոյ, Պուլկարիոյ և Պոսնիոյ իշխաններուն հետ նիգակակցելով՝ մեծ բանակով մը Սուլթան

Մուրատի դէմն ելաւ : Ճակատամարտը տեղի ունեցաւ Քոստոյա քաղաքին մօտ՝ (1389) ուր Քրիստոնէից դաշնակից բանակը յաղթուելով ցիր ու ցան եղաւ : Սուլթան Մուրատ՝ այս յաղթութենէ յետոյ մեռաւ :

Այս թագաւորին օրով Օսմանցւոց Մայրաքաղաք եղաւ Էտիրնէ :

Սուլթան Մուրատ թագաւորեց 30 տարի :

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՞վ յաջորդեց Օրխանի . — Ո՞ր քաղաքին տիրեց . — Թուէ՛ իրեն ժամանակակից երեւելի անձինքը . — Օրխան Եւրոպիոյ մէջ ո՞ր քաղաքաց տիրեց . — Ո՞րն է Քոստոյայի ճակատամարտը . — Մուրատի օրով Օսմանցւոց մայրաքաղաքը ո՞րն էր :



Մ Ա Ս Ն Բ.

ՍՈՒԼԹԱՆ ՊԱՅԱԶԻՏ Ա.Ի ՄԱՀՈՒԱՆԷ ՄԻՆՉԵԻ 4. ՊՈԼՍՈՅ  
ԱՌՈՒՄԸ

( Հիմերթի 804—857 Քրիստոնէից 1401-1453 )

ՍՈՒԼԹԱՆ ՊԱՅԱԶԻՏ Ա. (ԵՐԼՏՐՐՐԱՄ)

Սուլթան Մուրատի յաջորդեց իր ան-  
դրանիկ որդին Պայազիտ՝ որ իր արտաքոյ  
կարգի քաջութեան և տարած մեծամեծ  
և արագ յաղթանակներուն համար կոչ-  
ուեցաւ Երլտրրամ (կայծակ) :

Պայազիտ, նախ Ասիոյ մէջ Սըվազի եւ  
Մալաթիոյ ինքնիշխան Պէյուլթիւնները  
նուաճելով՝ անցաւ Եւրոպա, եւ տիրեց  
Պուլկարիոյ եւ Մոլտավիոյ :

Մաճառաց թագաւորը Սիկիսմոնտ՝ գու-  
շակելով իր տէրութեան սպառնացող վը-  
տանգը. դիմեց Հռոմայ Պապին՝ որու յոր-  
դորանօք Եւրոպացի այլ եւ այլ ազգերէ  
բաղկացած ստուար բանակ մը Մաճառաց  
օգնութեան հասաւ : Ճակատամարտը տե-  
ղի ունեցաւ Պուլկարիոյ Նիկոպոլիս քաղա-  
քին քով : Երկու կողմէ քաջութեամբ պա-

տերազմեցան թէև՝ բայց վերջապէս յազ-  
թութիւնը Օսմանցիք տարին (1396) :

Երկտըրըմ Պայազիտ՝ այս փառաւոր յա-  
ջողութենէն քաջալերուած՝ եկաւ Կ. Պոլիսը  
պաշարել, սակայն քիչ յետոյ սահպուե-  
ցաւ Ասիա անցնիլ և իր երկիրները պաշտ-  
պանել ահարկու թշնամիի մը դէմ, այն  
էր արիւնարբուն Լէնկթիմուր՝ որ ճինկիզ  
Խանի տէրութիւնը վերականգնելու դի-  
տաւորութեամբ՝ անթիւ հրոսակներով Թա-  
թարիստանէն դէպի արեւմուտք ճամբայ  
ելած՝ և ամեն անցած տեղերն արիւնլուայ  
ընելէ յետոյ՝ կուգար Օսմանեան երկիր-  
ներն ասպատակել : Սուլթան Պայազիտ՝  
անհաւասար զօրութեամբ Անկուրիոյ մօտ  
Թաթար աշխարհակալին դէմ արիաբար  
ճակատեցաւ, բայց յազթուելով մեռաւ  
սրտին ցաւէն՝ 14 տարի թագաւորելէ ետքը :

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՞վ յաջորդեց Սուլթան Մուրատ Ա. ի . —  
Պայազիտ ինչո՞ւ Երկտըրըմ կոչուեցաւ . — Պա-  
յազիտ ո՞ր երկիրներուն տիրեց . — Ի՞նչպէս  
եղաւ Նիկոպոլսոյ ճակատամարտը . — Սուլ-  
թան Պայազիտ ինչո՞ւ Ասիա անցաւ . — Ո՞վ

էր Լէնկթիմուր . — Ինչպէ՞ս եղաւ Անկուրիոյ  
պատերազմը . — Ի՞նչ վախճան ունեցաւ Սուլ-  
թան Պայազիտ . — Քանի՞ տարի թագաւորեց :



## ՍՈՒԼԹԱՆ ՄԷՆԷՄՍԷՏ Ա. (ՉԷԼԵՅԻ)

(Թուական Հին. 816 — Թուական Քր. 1413)

Սուլթան Պայազիտի մեռնելէն յետոյ՝  
իր կրտսեր որդին Մէհէմմէտ՝ Էտիքնէի  
մէջ դահն ելաւ :

Սուլթան Մէհէմմէտ իր վայելուչ կեր-  
պարանքին և շնորհալի ձեւերուն համար  
կոչուեցաւ Չէլէպի :

Սուլթան Մէհէմմէտ թէև բնութեամբ  
խաղաղասէր էր՝ պարտաւորեցաւ սակայն  
երկրին մէջ տիրող անկարգութեանց վերջ  
տալ : Այս ըմբոստներուն գլխաւորն էր իր  
Ալաէտտին վեհան՝ Գարամանի Պէյը՝ ու  
րու դէմ երթալով բոլորովին յաղթեց :  
Նոյն միջոցին Եւրոպայի կողմն ալ իր Սու-  
սա զօրավարը Մաճառայ Սիկիսմոնդ կայ-  
սեր դէմ ճակատելով՝ Սէմէնտրիա քա-  
ղաքին քով փառաւոր յաղթութիւն մը  
տարաւ :




Աււաջինն անգամ այս վեհապետին օրով է որ Օսմանյիք սկսան Եւրոպական քանի մը տէրութեանց մօտ դեսպաններ զրկել :

Սուլթան Մէհմեմէտ կաթուածահար մեռաւ՝ 6 տարի թագաւորելէ յետոյ :

### Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Սուլթան Պայազխտի մահուանէ յետոյ ո՞վ յաջորդեց իրեն . — Մէհմեմէտ Ա. ինչո՞ւ Չէլէպի կոչուեցաւ . — Ի՞նչ պատերազմներ մղեց . — Ո՞րն է Սէմէնտրիայի ճակատամարտը . — Այս Սուլթանին օրով ի՞նչ նոր տնօրինութիւն եղած է . — Ի՞նչպէս մեռաւ Սուլթան Մէհմեմէտ :



### ՍՈՒԼԹԱՆ ՍՈՒՐԱՏ Բ.

(Թուական Հին. 824 — Թուական Քր. 1421)

Սուլթան Մէհմեմէտի յաջորդեց իր 18 տարեկան օրդին Սուլթան Մուրատ Բ. Սա պատերազմ՝ բացաւ Վենետիկցիներուն դէմ և անոնց ձեռքէն առաւ Սէլանիկ, Կորընթոս և Բաթրաս քաղաքները : Ապա 200,000 զօրքով դնաց պաշարել Արեւելեան կայսրութեան մայրաքաղաքը Կ. Պոլիս՝ ոչու

կայսրն էր այն ժամանակ Կոստանդին ժԲ.  
Պաշտօրօգ :

Սակայն նոյն միջոցին իմանալով որ Մա-  
ճառաց Վրասխաշառ թագաւորը և Հռնի-  
աս Թրանսիլվանիոյ իշխանը մէկ կողմէ,  
Իսկէնսէր Պեյ՝ Ալպանիոյ ահարկու իշխանը  
միւս կողմանէ՝ Օսմ. երկիրները կ'առաջա-  
տակեն, Կ. Պոլսոյ պաշարումը վերցուց և  
իր թշնամեաց հետ ալ հաշտութիւն ըրաւ,  
պայմանաւ որ խաղաղութեան դաշինքին  
երկու կողմանէ հաւատարիմ գտնուին: Ասկից  
յետոյ Սուլթան Մուրատ գահէն հրաժա-  
րելով՝ Մաղնիսա քաղաքը քաշուեցաւ :  
Բայց քիչ յետոյ լսելով որ իր թշնամիները  
իրենց ուխտը դրժելով վերստին պատե-  
րազմի կը պատրաստուին՝ Սուլթան Մու-  
րատ արդար բարկութեամբ բորբոքած՝  
անոնց դէմ ելաւ և 1444ին Վառնայի մօտ  
նշանաւոր յաղթութիւն մը տանելով իր  
վրէժը լուծեց : Այս ճակատամարտին մէջ  
Վլատիսլաւ իր մահը գտաւ և Հունիստ  
հալածական՝ վերադարձաւ իր երկիրը :

Սուլթան Մուրատ թագաւորեց 31 տա-  
րի :

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՞վ յաջորդեց Սուլթան Մէհմէմէտի . —  
 Մուրատ Բ. ի՞նչ քաղաքներու տիրեց . — Ի՞նչ  
 չո՞ւ վերցուց Կ. Պոլսոյ պաշարուիւր . — Որո՞նք  
 էին Օսմ. Սուլթանին դէմ նիզակակցող Եւրո-  
 պացի իշխանք . — Ի՞նչ պատճառաւ Սուլթան  
 Մուրատ՝ երկրորդ անգամ դահն ելաւ . —  
 Ո՞րն է Վառնայի ճակատամարտը . — Ի՞նչպիսի  
 պատժուեցան ուխտադրուծ իշխանները :



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ԱՌՈՒՄԷՆ ՄԻՆՉԵՒ ՍՈՒԼԹԱՆ ՍԷԼԻՄ  
Բ. ԿԱՄ ՍՈՔՈՒԼԼՈՒ ՄԷՅԷՄՄԷՏ ՓԱՇԱՅԻ ՄԱՅՇ

### Մ Ա Ս Ն Գ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ ԱՌՈՒՄԷՆ ՄԻՆՉԵՒ ՍՈՒԼԹԱՆ ՍԷԼԻՄ  
Բ. ԿԱՄ ՍՈՔՈՒԼԼՈՒ ՄԷՅԷՄՄԷՏ ՓԱՇԱՅԻ ՄԱՅՇ

### ՍՈՒԼԹԱՆ ՄԷՅԷՄՄԷՏ Բ. (Ֆաթիհ)

(Թուահան Հին. 857-987 Թուա. Քր. 1453-1579)

Սուլթան Մուրատի որդին և Օսմանեան  
ամենէն նշանաւոր վեհապետներէն մէկը  
եղաւ Սուլթան Մէհմէմէտ Բ. որու գլխաւոր  
նպատակն եղաւ Կ. Պոլիսն առնել: Այս  
միջոցին Արեւելեան կայսրութիւնը յետին  
ծայր տկարացած էր: Այս տկարութեան  
պատճառներն էին՝ մէկ կողմանէ Օսմանցւոյ  
անդադար յարձակումներն և միւս  
կողմանէ կրօնական անշահ և անտեղի խրո-  
ղիրներու համար կռիւներ՝ որով անպա-  
կաս էր ներքին երկպառակութիւնը: Սուլ-  
թան Մէհմէմէտ մեծամեծ պատրաստու-  
թիւններով էտիրնէէն կուգայ Կ. Պոլիս և  
նախ՝ Պատֆորի Ասիական եղերայ վրայ  
Պողագ ֆեսէն անուն բերդը կը կանգնէ:  
Վերջապէս 1453 Մարտի 6ին 300,000 զոր-  
քով և 250ի չափ նաւերով կը պաշարէ

Կ. Պոլիտը : Կոստանդին Յունաց վերջին կայսրը՝ այս գծուարին վիճակին մէջ կը դիմէ Արեւմտեան ազգերու օգնութեան , սակայն ոչ ոք կը լսէ իր խնդիրն բայց ի մի քանի հարիւր ձէնովացիներէ՝ որոց գլխաւորն էր անուանին Ճիռադիանիս :

Կոստանդին, թէև միայն 4-5000 զօրք և սակաւաթիւ նաւերէ բազկացեալ տորմիզ մ'ունէր , չուզելով Սուլթանին անճնատուր ըլլալ՝ պատրաստուեցաւ իր մայրաքաղաքը պաշտպանել : Օսմանցիք գլխաւորապէս ունէին վիթխարի թնդանօթ մը , որու համար աւանդութեամբ կ'ըսեն թէ 12 կենդինար ծանրութեամբ ռումբեր կ'արձակէր : Սոյն ահարկու թնդանօթն Օսմանցիք Ս. Ռոմանոսի դրան գլխաց զետեղած ըլլալուն՝ այդ թուակունէն յիշեալ դուռը կոչուեցաւ Թօփ-Գափու :

Ղուկաս Կոստանդին Յունաց ծովակալը՝ Օսմանեան նաւատորմին մէկ մասն այրելէ յետոյ՝ Ղալաթիայէն դիմաց (դէպ 'ի Պաղչէ Գաբուի ծովեզրը) ահագին շղթայ մը ձգեց որով կ'արգիլէր Օսմ. նաւերուն դէպ 'ի ներքին նաւահանգիստ (Ոսկեղջիւր) մըտ-

նելը: Արիասիրտ Սուլթանը ասով ալ չ'յու-  
սահատիր և արտաքոյ կարգի հնարք մը  
կը գտնէ: Տոլմա Պաղչէի կամ Սալը բա-  
զարի ծովեզրէն դէպ 'ի Օք-Մէյտանիի  
բլուրը և անկից վար՝ Բատրմ փաշայի ծու-  
վախորչը տախտակէ սահուն ճամբայ մը  
չինել ապով՝ 80ի չափ նաւեր ծով կ'իջեցնէ  
մէկ գիշերուան մէջ: Յոյները ասիկա տես-  
նելով կը սարսափին, բայց տակաւին յանձն  
չեն առներ անձնատուր ըլլալ: Այն ատեն  
Օսմանցիք Մայիսի 29ին ծովէն ու դամա-  
քէն կը պաշարեն քաղաքը ու երկու կող-  
մէն սոսկալի կոտորածէ յետոյ՝ վերջապէս  
Օսմանցիք Քախրափորթա դուռնէն կը մըտ-  
նեն ներս և քաղաքին կը տիրանան: Կոս-  
տանդին կայսրը խառնուրդին մէջ նետուե-  
լով՝ դիւցազնաբար կը կռուի և քաղաքին  
վերջին պաշտպաններուն հետ կ'իյնայ ու  
գետապառ:

Սուլթան Մէհմէմէտ Կ. Պոլսոյ առման  
աւետիան ընդունելով՝ յաղթանակաւ մը-  
տաւ ի քաղաք և ուղղակի Այա-Սոֆիայի  
եկեղեցին գնայ ուր յերեկեայ նաւագր  
կատարելէ յետոյ՝ հրամայեց մզկիթի վե-

րաժեշտ Մեծին Յուստինիանոսի այն հրաշակերտ եկեղեցին :

Սուլթան Մէհէմէտ Կ. Պոլիսն առնելէ ետև զայն իր մայրաքաղաքն ըրաւ, բընակչաց հետ շատ քաղցրութեամբ վարուեցաւ, և Յունաց Պատրիարք մը կարգելով՝ ազգային ու կրօնական մեծամեծ արտօնութիւններ շնորհեց : Նոյնպէս Պրուսայի Յովակիմ եպիսկոպոսը՝ որ բարեկամն էր Սուլթանին, Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք կարգուեցաւ առանձին հրովարտակով :

Սուլթան Մէհէմէտ Կ. Պոլիսն առնելով կոչուեցաւ Փաթիհ, այսինքն աշխարհակալ : Փաթիհ տիրեց նաև Հէրսէքի, Պանիոյ, Խրիմու, Մուայի, Ռումանիոյ, Օդրանդի, Սինոպի, Թրապիզոնի և վերջապէս 200ի չափ քաղաքացի :

Սուլթան Մէհէմէտ որքան աշխարհակալ՝ նոյնքան ևս աշխարհաշէն վեհապետ մ'էր : Ինքը շինեց Մարմարայի բերդերը, եկտի Գուլէյի ամրոցը, Սարայ Պուրնուի արքունական հայակապ պալատը, էյուպ Սուլթանի մզկիթն ուր թաղուած է Մարգարէին դրօշակիրն Խալիա էյուպ : Նոյն-

պէս իր անունով փառաւոր մզկիթի մը հիմունքը դրաւ և ուր թաղուեցաւ ի վերջոյ : Ասոնցմէ 'ի դատ' Փաթիհ' խաներ , հիւանդանոցներ , գրատուն , աղբիւրներ , բաղնիքներ և այլ նմանօրինակ կարեւոր շինութիւններով իր նոր մայրաքաղաքը զարդարեց :

Կ'ըսուի թէ Սուլթան Մէհէմէտ 5-6 լեզու գիտէր և թէ՛ բանաստեղծութեան ու նկարչութեան ալ մեծ փափաք և յարմարութիւն ունէր :

Սուլթան Մէհէմէտ մեռաւ 1481 ին՝ 31 տարի թագաւորելէ յետոյ :

### Հ Ա Ր Ց Ա Ր Ա Ն

Սուլթան Մուրատի ո՞վ յաջորդեց . — Ի՞նչ պիտի անձ էր Սուլթան Մէհէմէտ Բ. և ի՞նչ էր իր գլխաւոր փափաքը . — Արեւելեան կայսրութիւնն ի՞նչ վիճակի մէջ էր այս ժամանակ . — Սուլթան Մէհէմէտ Բ. ե՞րբ և ինչ պատրաստութիւններով եկաւ Կ. Պոլիսը պաշարել . — Յոյնք ի՞նչքան զօրութիւն ունէին . — Ո՞վ էր իրենց կայսրը . — Որո՞նք իրեն օգնութեան եկան . — Սուլթան Մէհէմէտ ի՞նչպէս իր նաւերը իջեցուց Ոսկեղջիւրի մէջ . — Օսմանցիք ե՞րբ և ո՞ր դռնէն քաղաք մտան . — Ի՞նչպէս



մեռաւ Կոստանդին . — Սուլթան Մէհմէտ  
ի՞նչպէս վարուեցաւ բնակչաց հետ . — Հայոց  
ի՞նչ ըրաւ . — Փաթիհ տակաւին ի՞նչ քաղա-  
քաց տիրեց . — Ի՞նչ կը պատմուի Սուլթան  
Մէհմէտի վրայ . — Ե՞րբ մեռաւ և քանի  
տարի թագաւորեց :

---

### ՍՈՒԼԹԱՆ ՊԱՅԱՂԻՏ Բ.

(Թ. Հ. 886 — Թ. Ք. 1481)

Փաթիհի յաջորդեց որդին Պայաղիա :

Սուլթան Պայաղիա բոլորովին նուաճեց  
Ալպանիան , Հէրսէքն ու Պոսնան , նոյնպէս  
պատերազմներ ըրաւ Վենետիկեցոց հետ  
և անոնց ձեռքէն առաւ Նաւարին , Քորոն  
և Մօտէն քաղաքները : Վենետիկեցիք նեղը  
մնալով՝ Սուլթանին հետ հաշտութիւն ըրին  
որով արտօնութիւն ունեցան Սև ծովու  
մէջ վաճառականութիւն ընել և Կ. Պոլսոյ  
մէջ ունենալ դեսպան՝ որ կը կոչուէր Պայշ  
Կամ Պաշիօզ :

Այս Սուլթանին ժամանակն էր որ Կ.  
Պոլսոյ մէջ ստակալի երկրաշարժ մը պատա-

հելով՝ քաղաքին կէսէն աւելին փլատակ  
դարձաւ :

Սուլթան Պայազիտ՝ Տիւֆօթիքա քաղաքը  
առանձնանալու դայած ատեն ճամբան  
մեռաւ՝ 32 տարի թագաւորելէ յետոյ :

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Սուլթան Մէհէմէտի ո՞վ յաջորդեց . —  
Սուլթան Պայազիտ ի՞նչ պատերազմներ մղեց .  
— Վենետկեցւոց ձեռքէն ո՞ր քաղաքներն ա-  
ռաւ . — Ի՞նչ արտօնութիւններ ունեցան Վե-  
նետկեցիք . — Այս Սուլթանին օրով Կ. Պոլսոյ  
մէջ ի՞նչ դէպք պատահեցաւ և ինքն ո՞րչափ  
թագաւորեց :

ՍՈՒԼԹԱՆ ՍԷԼԻՄ Ա. (Եավուզ)

( թ. Հ. 918 — թ. Ք. 1512 )

Սուլթան Պայազիտի յաջորդեց անդրա-  
նիկ որդին Սուլթան Սէլիմ Ա. : Սուլթան  
Սէլիմ իր իշխանութեան երկրորդ տարին  
Ասիա անցաւ և Ճաշքրան դաշտին մէջ  
Պարսից Շահ Իսմայիլ թագաւորին դէմ  
փառաւոր յաղթութիւն մը տանելով՝ տի-

րեց Վերին Միջագետաց և Վրաստանի և Անկից իջաւ Սուրիա և Հալէպի մօտ Մէմլուքներուն հետ զարնուելով յաղթեց՝ և առաւ Գամասկոս ու Հալէպ քաղաքները և Սուլթան Սէլիմ մինչև Եգիպտոս յառաջանալով՝ Քասնառն-Կալիքի Սուլթանն ալ նուաճեց և յաղթանակաւ Գահիրէ մտնելով՝ հետեւեալ օրն հանդիսաւոր կերպով ընդունեց Մէքքէ և Մէտինէ Իսլամաց նուիրական քաղաքներուն բանալիները ։ Անկից ետքը Օսմանեան Վեհապետները կոչուեցան Խաշիճէ և պաշտպան Իսլամական կրօնին ։

Այս Սուլթանին օրով էր որ ճէզաիրի իշխան ու երեւելի ծովասպատակ Խայրէտտին Պարպարոսա՝ ինքնակամ՝ Օսմանցւոց հպատակելով՝ ճէզաիր ևս Օսմանեան պետութեան միացաւ ։

### Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՞վ յաջորդեց Սուլթան Պայազիտի . — Սէլիմ ի՞նչ բնութեան տէր էր . — Ո՞վ էր իրեն ժամանակակից Պարսից Շահն . — Ո՞ւր յաղթեց անոր և ո՞ր քաղաքներն առաւ . — Ո՞ւր յաղթեց Մէմլուքներուն և ի՞նչպէս տիրեց Եգիպտոսի .

տասի . — Ինչո՞ւ կոչուեցաւ Խաչիճե . — Այլ  
էր Խաչրէտտին Պարպարոսա . — Սուլթանն Ալ-  
Լիմ քանի՞ տարի թագաւորեց :



### ՍՈՒԼԹԱՆ ՍԻԼԷՅՄԱՆ Ա. (Դանուսի)

(Թ. 2. 836 — Թ. Բ. 1520)

Սուլթանն Սէլիմի որդին էր Սուլթանն Սիւ-  
լէյմանն Ա. որ իր դարու վեհապետաց ա-  
մենէն երեւելիներէն մին եղաւ :

Սուլթանն Սիւլէյմանն նշանուոր է իբրեւ  
Օրէնսդիր , վերանորոգիչ և աշխարհակալ  
թագաւոր : Իր դահակալութեան առաջին  
տարին Ասորուոց երկրի կուսակալը ճան-  
պէրլի կազալի՝ Օսմ. պետութեան դէմ  
ըմբոստանալով՝ Սուլթանն Սիւլէյմանն՝ Յեր-  
հաս փաշան դրկեց , որ այս շարժումը խեղ-  
դելով՝ անոր պարագլուխն ալ սպաննեց :  
Ասկից յետոյ Սուլթանն Սիւլէյմանն Պարսից  
հետ զինադադար ընելով՝ յաջորդ տարին  
200,000 զօրքով պաշարեց Հոտորս կղզին  
որ երուսաղէմի Ս. Օհաննու կարգին առ-  
պետաց ձեռքն էր : Պաշարումը վեց ամիս

տեւեց և Օսմանցիք մեծ կորուստներ ունեցան: Կղզեցիք թէև երկար ատեն արիարար դիմադրեցին, բայց վերջապէս ուտեստի և ռազմամթերքի չգոյութեան պատճառաւ՝ ստիպուեցան Սուլթանին անձնատուր ըլլալ (1522): Ասպետները իրենց Վիլիէ-սը-լիշ-Ասաւ գլխաւորին առաջնորդութեամբ Հռոդոսէն ելնելով՝ հաստատուեցան Մալթա կղզին զոր իրենց կը նուիրէր Կարոլոս Ե. Գերմանիոյ կայսրը:

Սուլթան Սիւլէյման Սերպիացւոց դէմ ալ պատերազմելով՝ Պէլկրատի տիրեց և վերադարձաւ Պոլիս: Սերպիացի գերիները Վերին Պոսֆորի կողմերն հաստատուեցան ուր մինչև այսօր՝ Պէօյիւքտէրէի մօտ իրենց մայրաքաղաքին անունով կը գտնուի Պէլկրասճըզ գիւղը:

1526ին Սուլթան Սիւլէյման Մաճառներուն դէմ նշանաւոր յաղթութիւն մը տարաւ Մոհաց ըսուած դաշտին մէջ՝ ուր մեռաւ իրենց Կուրթուլիկոս թագաւորը: Երեք տարի յետոյ, Պոլսա քաղաքն ալ առնելով՝ Վիէննան պաշարեց: Քսան կատաղի յարձակումներէ վերջ, Եէնիչերինե-

րուն անկարգութեան և պաշարի չգոյութեան պատճառաւ՝ Օսմանցիք սախալուեցան պաշարումը վերցնել : Եւրոպայէ վերադարձին՝ Սուլթան Սիւլէյման Ասիա անցաւ և յաղթելով Պարսից Շահ Թահմազ թագաւորին՝ անոր ձեռքէն առաւ Վերին Միջագետաց մնացեալ մասին հետ՝ նաև Վան, Խլաթ և Պաղտատ նշանաւոր քաղաքները : Սուլթան Սիւլէյմանի ժամանակակից էին Իերմանիոյ Կայսր՝ Կարոլոս Ե. և Ֆրանսայի թագաւոր՝ Ֆրանսուա Ա. որու բարեկամ ու դաշնակիցն էր Սուլթան Սիւլէյման :

Սուլթան Սիւլէյման իմանալով որ Մաճառները Աւստրիացոց դրդմամբ նորէն գլուխ վերուցեր են . սախալուեցաւ վերջին անգամ մ'ալ անցնիլ Եւրոպա՝ ուր թըշնամեաց բանակին յաղթելով՝ ՍիկէՏ բերդաքաղաքն առաւ և յաղթանակաւ վերադարձաւ :

Սուլթան Սիւլէյման նորանոր և իմաստուն օրէնքներ դնելուն համար՝ կոչուեցաւ Իսկուսի՝ այսինքն օրէնսդիր — Ուսումասէր, գիտութեանց և արուեստից

պաշտպան և առաաաճեալն վեհապետ մ'էր։  
Իր մկած մեծամեծ աւերկարատե պա-  
տերազմներուն մէջ 13 անգամ ինք առաջ-  
նորդեց քանակը և միշտ յազթող եղաւ ։

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Սուլթան Սէլիմի ո՞վ յաջորդեց . — Ինչ-  
պիսի յատկութեանց տէր էր Սուլթան Սիւլէյ-  
ման Ա. — Իր օրով որո՞նք գլուխ քաշեցին . —  
Սուլթան Սիւլէյման երբ և ինչպէս առաւ  
Հռոմս կղզին . — Ո՞վ էր ըմբոստներուն գըլ-  
խաւորն և որ կղզին քաշուեցաւ իր մարդոց-  
մով . — Սուլթան Սիւլէյման Պելկրատի ինչ-  
պէս ատրեց . — Պոլսոյ ո՞ր կողմն հաստատուե-  
ցան Սերպիացի գերիներն . — Պարսից ո՞ր թա-  
գաւորին դէմ պատերազմ ըրաւ Սուլթան Սիւ-  
լէյման . — Ո՞ր քաղաքներն առաւ անոր ձեռ-  
քէն . — Ներսպացի ո՞ր երեւելի վեհապետները  
իրեն ժամանակակից էին . — Սուլթան Սիւ-  
լէյման վերջին անգամ որո՞նց դէմ պատերազմ  
ըրաւ . — Ինչո՞ւ կոչուեցաւ Գանունի և քանի  
տարի թագաւորեց ։



## Մ Ա Ս Ն Գ .

ՍՈՔՈՒԼԼՈՒ ՄԷՅԷՄՄԷՏ ՓԱՇԱՅԻ ՄԱՅՈՒԱՆԷ (ՄԻՆՉԵԻ  
ՍՈՒԼԹԱՆ ՍԷԼԻՄ Գ .

## ՍՈՒԼԹԱՆ ՍԷԼԻՄ Բ .

(Թուրքական Հին. 987-1203 — Քր. 1579-1788)

Սուլթան Սելիմյանի յաջորդեց իր որդին Սելիմ Բ. որ կառավարութեան զէկն յանձնեց հռչակաւոր վէզիր՝ Սոքուլու Մէհմէտ փաշային : Այս միջոցին Օսմանեան նաւատորմը Խայրէատին Պարպարոսա ծովակալ փաշային ջանքով մեծ կատարելութեան հասնելով՝ Միջերկրականի տէրութեանց սարսափ կ'ազդէր : Սուլթան Սելիմ սպարապետ Լալա Մուսթաֆա փաշայի և Պարպարոսայի միջոցաւ վենետկեցւոց ձեռքէն կրետէ կղզին առած էր արդէն : Այս մեծ կորուստը դարմանելու համար, վենետկեցիք, Սպանիոյ և Իտալիոյ հետ կը նիզակակցին և ահագին տորմիզ մը պատրաստելով Այնէպալիսի կամ Լէբանթի ծոցին մէջ (Մուայի արեւմտեան հիւսիսա-



կողմը) Օսմանեան նաւատորմը կը պաշարեն : Գաշնակից նաւատորմին հրամանատարն էր Տօն Ժուան՝ Գերմանիոյ կարողութե. կայսեր որդին , իսկ Օսմանցւոց ծովակալն էր Միւէզզին Չատէ Ալի փաշա : Սուկալի եղաւ այս ծովային պատերազմն , որու մէջ երկու կողմանէ արիաբար կռուեցան : Բայց երբ Գաբտան փաշան սպաննուեցաւ , Օսմանցիք իրենց կարգը շփոթելով՝ սկսան ցրուիլ (1571) :

Այս ճախորդութենէ վեց ամիս յետոյ՝ Քրչըն Ալի փաշա նոր ու զօրաւոր տորմիւղով մը վենետիկեցիներուն դէմ դնաց՝ որոնք առանձին մնացած ըլլալով՝ չհամարձակեցան զարնուիլ Օսմանցւոց հետ և անմիջապէս հաշտութիւն խնդրեցին , յանձրն առնելով Կիպրոս կղզին Սուլթանին թողուլ և իբր պատերազմական տուգանք՝ 30,000 ոսկի դահեկան վճարել :

Սուլթան Սէլիմի օրով Օսմանցիք բոլորովին տիրեցին Թունուզի , Թարապլուս և Արաբիոյ մէջ՝ Ատէն քաղաքին :

Այս Սուլթանին օրով կ'ապրէր հռչակա-

ւոր Շէյխ-Իւլ-Իսլամ Ապու-Ռասուտոս է-  
ֆէնտի :

Սուլթան Սէլիմ 18 տարի թագաւորեց :

Հ Ա Ր Ց Ա Ր Ա Ն

Ո՞վ յաջորդեց Սուլթան Սիւլէյմանի . —  
Ի՞նչպիսի թագաւոր մ'էր Սուլթան Սէլիմ Բ.  
— Ո՞վ էր իր վեզիրը . — Իր օրով ո՞ր երե-  
ւելի նաւամարտը տեղի ունեցաւ . — Ո՞վ էին  
Օսմանցւոց և Դաշնակից նաւատորմին հրամա-  
նատարները . — Ի՞նչ կորուստներ ունեցան Օս-  
մանցիք . — Սուլթան Սէլիմ ի՞նչպէս լրէժ-  
լուծեց վեհեակեցիներէն . — Այս Սուլթանին  
օրով ո՞ր երկիրներն Օսմանեան պետութեան  
միացան . — Ո՞վ էր իր ժամանակակից Շէյխ  
իւլ Իսլամը . — Սուլթան Սէլիմ քանի՞ տարի  
թագաւորեց :

Ս Ո Ւ Լ Ք Ա Ն Մ Ո Ւ Ր Ա Տ Գ .

( Թ . Հ . 982 — Թ . Ք . 1576 )

Սուլթան Սէլիմի երէց որդին էր Մու-  
րատ Գ . որ առաջին անգամ խաղաղութիւն  
ընելով Աւստրիոյ կայսր՝ Մաքսիմիլիանոսի

հետ՝ մեծ բանակով Ասիա անցաւ և Չըլ-  
տըրի դաշտին մէջ յաղթեց Պարսից՝ որոնք  
Օսմանեան երկիրներն վերստին ասպատա-  
կել սկսած էին : Այս յաղթութեամբ  
դարձեալ Օսմանցւոց ձեռքը մնաց Վրաս-  
տան ու Շիրվան դաւառները, Երեւան ու  
Գաւրէժ և Ատրպատականի մէկ մասը :

Եւրոպական մասին մէջ ալ Մուլտավիա,  
Վալաքիա և Թրանսիլվանիա շիտթութեան  
մէջ էին : Թէև Սուլթանը քանի մը ան-  
գամ այս ըմբոստներուն դէմ զօրք զրկեց՝  
սակայն Եէնիչերեաց անընդհատ անկար-  
գութեան պատճառաւ չյաջողեցան :

Այս Սուլթանին օրով Օսմանեան պե-  
տութիւնն հասաւ իր աշխարհադրական  
մեծագոյն ընդարձակութեանը :

Նոյնպէս, առաջին անգամ ըլլալով՝ Օսմ.  
պետութիւնը Անգլիոյ հետ առեւտրական  
դաշնագիր կնքած է :

Սուլթան Մուրատ Բ. թագաւորեց 21  
տարի :

### Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Սուլթան Սէլիմի ո՞վ եղաւ յաջորդ. — Մու-  
րատ Գ. որո՞ւ հետ խաղաղութիւն կնքեց . —

Ասիոյ կողմն որո՞ւ գէմ յաղթութիւն տարաւ  
և ո՞ր քաղաքաց տիրեց . — Եւրոպական մա-  
սին մէջ ինչո՞ւ զինուց յաջողութիւն չունեցաւ .  
— Այս Սուլթանին օրով Օսմ. Պետութեան ըն-  
դարձակութիւնն ո՞րչափ էր . — Ո՞ր տէրու-  
թեան հետ առեւտրական դաշնագիր կնքեց  
Սուլթան Մուրատ Գ. և ո՞րչափ թագաւորեց :



## ՍՈՒԼԹԱՆ ՄԷՅԷՄՄԷՏ Գ.

(Թ. Հ. 1003 — Թ. Ք. 1594)

Սուլթան Մուրատ Գ. ի յաջորդեց Սուլ-  
թան Մէհէմէտ Գ. որու գահակալութեան  
միջոցին Վալաքիա տակաւին խռովութեան  
մէջ էր : Սուլթան Մէհէմէտ յաջորդաբար  
քանի մը բանակ զրկեց ՚ի Վալաքիա օրոնք  
ոչինչ կրցան ընել և կորուսին Նիկոպոլիս,  
Վիսին և Թիոկոպիճա ռազմական քա-  
ղաքները : Օսմանեան զինուց այս անյաջո-  
ղութենէ սիրտ առած, Մաճառներն ալ Օս-  
մանեան երկիրներն սկսան ասպատակել :  
Երբ Սուլթան Մէհէմէտ այս ամէն ճա-  
խորդութիւններն իմացաւ՝ ինքն անձամբ

բանակին գլուխն անցնելով Մաճառաց  
դէմ քալեց, Նիհան դաշտին մէջ յաղթեց  
իր թշնամիներուն և առաւ էկէր կամ էրշար  
բերդաքաղաքը : Սակայն Սուլթան Մէ-  
հէմէտ չկրցաւ իր յաղթութեան պտուղը  
վայելել, որովհետեւ քիչ յետոյ Մաճառ-  
ները վերստին գլուխ քաշելով Օսմանցւոյ  
ձեռքէն շատ մը քաղաքներ առին :

Սուլթան Մէհէմէտ թագաւորեց Զտարի :

### Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՞վ յաջորդեց Սուլթան Մուրատ Գ. ի . —  
Սուլթան Մէհէմէտի ժամանակ Եւրոպական  
Տաճկաստան ի՞նչ վիճակի մէջ էր . — Օսման-  
ցիք ի՞նչ կորուստներ ունեցան . — Սուլթա-  
ն Մէհէմէտ Մաճառաց ձեռքէն ո՞ր քաղաքն ա-  
ռաւ . — Քանի՞ տարի թագաւորեց Սուլթան  
Մէհէմէտ :

---

### Ս ՈՒ Լ Ք Ա Ն Ա Շ Մ Է Տ Ա .

( Թ. Հ. 1012 — Թ. Ք. 1063 )

Սուլթան Մէհէմէտի որդին էր Ահմէտ .  
Ա. որ 14 տարեկան հասակին մէջ կայսե-  
րական գահն ելաւ :

Թէև անչափահաս՝ սակայն հայրենասէր  
ու քաջասիրտ կայսր մ'եղաւ Սուլթան Ահ-  
մէտ : Նախ պատերազմ բացաւ Պարսից  
Շահ Ապպաս թագաւորին դէմ որ երեւան,  
Գավրէժ ու Վան քաղաքները գրաւած էր :  
Այս պատերազմն ութը տարի տեւեց,  
բայց երբ Աւստրիացիք ու Մաճառներն ալ  
Օսմանցւոյ դբադեալ վիճակէն օգուտ քա-  
ղելով դուրս վերուցին, Սուլթան Ահմէտ  
հաշտութիւն ըրաւ Պարսից հետ, անոնց  
թողլով այն քաղաքներն որոնք Գանուխի  
Սուլթան Սիւլէյմանէն առաջ արդէն ի-  
րենց ձեռքն էին :

Աւստրիացւոյ հետ ալ հաշտութիւն ը-  
րաւ և անոնց թողուց Ռա'ապ ու Քորման  
բերդաքաղաքները և միեւնոյն ժամանակ  
ազատ կացուցանելով զՄաճառիստան՝ Օս-  
մանցւոյ տարեկան հարկ վճարելէ :

Սուլթան Ահմէտի ժամանակ Փոքր Ասիոյ  
մէջ երեւան ելած էին Սիւրախի և Ճէրաշի  
կոչուած ըմբոստներու խումբեր, որոնք  
երկիրն աւերելով՝ բնակչաց ալ մեծ նե-  
ղութիւն կը պատճառէին : Սուլթան Ահ-  
մէտ անոնց դէմ զրկեց Սպարապետ Մու-

րատ փաշան որ՝ ըմբոսաները զարկաւ ցըր-  
ուեց և անոնց պարագլուխներն ալ բռնե-  
լով՝ հորերու մէջ նետեց : Այս պատճա-  
ռաւ Մուրատ փաշա կոչուեցաւ Գուչուճը :  
Սուլթան Ահմէտ թագաւորեց 14 տարի :

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՞վ յաջորդեց Սուլթան Մէհմէտի Գ. ի. —  
Ի՞նչպիսի թագաւոր մ'էր Սուլթան Ահմէտ Ա.  
— Ասիոց կողմն որո՞ւ հետ պատերազմեցաւ. —  
Ի՞նչ հետեւանք ունեցաւ Պարսկական պատե-  
րազմը . — Եւրոպական մասին մէջ ի՞նչ դէպ-  
քեր պատահեցան . — Սուլթան Ահմէտ ի՞նչ  
զոհողութիւններ ըրաւ . — Որո՞նք էին Սիփա-  
հիք ու Ճէլալիք . — Ո՞վ էր Գուչուճու Մու-  
րատ փաշան :

---

ՍՈՒԼԹԱՆ ՕՍՄԱՆ Բ.

( Թ. Հ. 1027 — Թ. Ք. 1617 )

Սուլթան Ահմէտ Ա. թէև իրեն յաջորդ  
նշանակած էր Մուսթաֆա եղբայրն , սա-  
կայն ասի քիչ ատեն իշխեց և անոր տեղ  
թագաւորեց Սուլթան Ահմէտ Ա. ի 14 տա-  
րեկան որդին Սուլթան Օսման Բ. :

Նորատի թագաւորը պատերազմ բա-  
ցաւ Լեհաց դէմ, սակայն Եէնիչէրիներուն  
անվերջ խռովութեանց պատճառաւ յաղ-  
թուելով՝ ուղեց բնաջինջ ընել տէրու-  
թեան այս փաստարեւր գունդն : Սակայն  
չյաջողեցաւ իւր նպատակին հասնիլ :

Սուլթան Օսման թագաւորեց 4 տարի :

#### Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Սուլթան Ահմէտ Ա. ի ո՞վ յաջորդեց, ո՞ր-  
չափ իշխանութիւն վարեց. — Օսման Բ. որոնց  
դէմ պատերազմ հրատարակեց, քանի՞ տարի  
թագաւորեց :



#### ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՍԹԱՅԱ Ա.

( թ. Հ. 1032 — թ. Ք. 1621 )

Սուլթան Օսմանի յաջորդեց Սուլթան  
Մուսթաֆա, որուն գահակալութեան ժա-  
մանակ Եէնիչէրիք դարձեալ ամէն անըզ-  
գամութիւն անպատիժ դործել սկսան :  
Քաւառներուն կուսակալներն ալ օգուտ  
քաղելով Մայրաքաղաքին մէջ տիրող ան-



կարգութենէն՝ սկսած էին ամէն իշխանութիւն և հրաման արհամարհելով՝ բռնանալ իրենց յանձնուած երկիրներուն մէջ : Սուլթան Մուսթաֆա՝ երկրորդ անգամ 15 ամիս միայն թագաւորեց :

### Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Օսման Բ. ի ո՞վ յաջորդեց . — Սուլթան Մուսթաֆայի գահակալութեան ժամանակ մայրաքաղաքն ու գաւառները ի՞նչ վիճակի մէջ էին . — Սուլթան Մուսթաֆա ո՞րչափ թագաւորեց երկրորդ անգամ :

---

### Ս ՈՒ Լ Ք Ա Ն Մ ՈՒ Ր Ա Տ Դ .

( Թ . Է . 1032 — Թ . Ք . 1622 )

Սուլթան Օսմանի կրտսեր որդին էր Մուրատ Դ . որ 14 տարեկան հասակին մէջ կայսերական գահն ելնելով՝ իր մօր Մահմիտի Սուլթանին խորհրդով կառավարեց տէրութիւնը : Այժմանաւոր և կարող անձեր պաշտօնի գլուխ անցուց և ներքին անկարգութեանց վերջ տուաւ : Յետոյ ինքն անձամբ Ասիա անցնելով՝ պատե-

րազմեցաւ Պարսից դէմ և անոնց ձեռքէն  
առաւ Երեւան, Դավրէժ ու Պաղտատ քա-  
ղաքները : Սակայն յաջորդ տարին երկու  
պատերազմող տէրութիւններուն մէջ հաշ-  
տութիւն կնքուելով՝ Օսմանցիք Պաղտատը  
միայն իրենց պահեցին, Պարսից թողլով  
Դավրէժ ու Երեւան քաղաքները :

Եէնիչէրիները այս Սուլթանին օրով նու-  
րէն սոսկալի կերպիւ կատղեցան և սրիկա-  
յսութիւնը վերջին աստիճանի հասուցին :  
Արիասիրտ Սուլթանը՝ խաղաղութեան սի-  
րոյն՝ պարտաւորեցաւ անոնցմէ շատերը  
բնաջինջ ընել :

Սուլթան Մուրատ Լիբանանու ըմբոստ  
Տիւրզիւներն ալ նուաճելէ յետոյ մեռաւ՝  
17 տարի իշխանութիւն վարելով :

### Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՞վ յաջորդեց Սուլթան Մուրատ Դ. ի. —  
Ո՞վ եղաւ Սուլթան Մուրատ Դ. ի Խնամակա-  
լուհի . — Ասիոյ մէջ ո՞ր քաղաքներուն տի-  
րեց . — Եէնիչէրիք ի՞նչ վիճակի մէջ էին . —  
Սուլթան Մուրատ վերջին անգամ ո՞ր խռովու-  
թիւնը զսպեց . — Ի՞նչ տարի թագաւորու-  
թիւն վարեց :



## ՍՈՒԼԹԱՆ ԻՊՐԱԶԻՄ Ա.

( Թ. Հ. 936 — Թ. Ք. 1520 )

Սուլթան Մուրատի յաջորդեց իր եղբայրն Իպրահիմ Ա. : Իր էշխանութեան առաջին տարին պարսաւորեցաւ պատերազմ բանալ Ռուսաց դէմ որոնք Օսմանցւոյ երկիրներն յառաջանալով՝ Ալախու բերդին ալ տիրած էին : Սուլթան Իպրահիմ Ռուսերը իր տէրութեան սահմաններէն վանելով՝ Ալախու բերդն առաւ անոնց ձեռքէն : Այս յաջողութենէ վեց տարի յետոյ՝ 1645ին՝ 350 նաւէ բաղկացեալ սորմիզ մը և 50,000 զօրք զըրկեց ՚ի Կրետէ որոնք կղզեցւոց բուռն յարձակումներն ՚ի դերև հանելով՝ յաջողեցան վերջապէս կղզին գլխաւոր բերդաքաղաքներուն տիրանալ :

Պատմութեանս շարունակութեան մէջ պիտի տեսնենք թէ Օսմանցիք այս դէպքէն քառորդ դար յետոյ միայն՝ Կրետէի ամբողջապէս տէր պիտի ըլլան :

Քանի մը տարի ետքը Վենետկեցիք Օս-

մանեան պահապան զօրքը կրետէէն կը  
վանեն՝ և կղզիին վերատին կը տիրանան :  
Սուլթան Իպրահիմ թագաւորեց ինը  
տարի :

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՞վ յաջորդեց Սուլթան Մուրատ Դ.ի. — Իպ-  
րահիմ Ա. որո՞նց դէմ պատերազմ բացաւ. —  
Ծովու վրայ ի՞նչ յաջողութիւն ունեցաւ Իպ-  
րահիմ Ա. : Իր մահուանէ յետոյ ի՞նչ դէպք պա-  
տահեցաւ, ո՞րչափ թագաւորեց :

---

ՍՈՒԼԹԱՆ ՄԷՅԷՄՄԷՏ Դ. (Ավեր)

( Թ. Հ. 1058 — Թ. Ք. 1648 )

Սուլթան Իպրահիմին յաջորդեց իր 7  
տարեկան որդին՝ որ անչափահաս ըլլալուն  
ի սկզբան իր մեծ մօր՝ Մահփէյքէր Սուլ-  
թանին խնամակալութեան ներքեւ իշխա-  
նութիւն վարեց :

Սուլթան Մէհէմմէտ տէրութեան ներքին  
ոյժերն ամրապնդելու փափաքով՝ եւ-  
րոպական տէրութեանց հետ խաղաղու-  
թեան դաշինք դրաւ : Վենետիկցիները շփո-

Թուժիւններէ առիթ գտնելով՝ կը գրաւեն Արշիպիղագոսի գլխաւոր կղզիներն և Չանաք-Քալէի մօտ Օսմանցւոց նաւատորմին մէկ մասը կ'այրեն :

Սակայն վենետկեցիներուն այս յաջողութիւնը երկար չը տեւեր, որովհետև Քէօփրիւլի Մէհմէմէտ փաշա այս ճգնաժամուն մէջ Մեծ Եպարքոսութեան պաշտօնին կոչուելով՝ անմիջապէս անկարգութեան վերջ կ'ուտայ և վենետկեցիներուն ձեռքէն՝ յափշտակուած երկիրներն ետ կ'առնէ :

Սուլթան Մէհմէմէտ իր նախորդին վերէժը լուծելու նպատակաւ Լէհերուն դէմ գնաց, յաղթեց և անոնց ձեռքէն առաւ Կարմէնից քաղաքը : Սուլթան Մէհմէմէտ թէև վիէննան ալ պաշարեց, սակայն քաղաքացիներուն սաստիկ ընդդիմութեան պատճառաւ չկրցաւ առնել և պարտաւորեցաւ պաշարումը վերցնել : Սուլթան Մէհմէմէտ աւելի յաջողութիւն ունեցաւ ծովու վրայ : Իր օրով վերջնապէս առնուեցաւ Կրետէ կղզին (1668) որու ծովափանց վրայ երկուստեք 150,000է աւելի մարդոց արիւն թափուած էր :

Սուլթան Մէհէմէտ վերջին անգամ իւր ղէնքը փորձել ուզեց Աւստրիացոց ղէմ, սակայն վերստին չ'յաջողեցաւ և այս անգամ Մոհաց ըսուած դաշտին մէջ Օսմանցիք պարտութիւն մը կրեցով (1687) կարեւոր գաւառներ կորուսին :

Սուլթան Մէհէմէտ 31 տարի թագաւորեց :

Սուլթան Մէհէմէտ քաջ որսորդ ըլլալուն համար՝ կոչուեցաւ Ալնը :

#### Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՞վ էր Սուլթան Մէհէմէտ Դ. — Ո՞վ էր իւր Խնամակալուհին. — Ներքին շփոթութեանց պատճառներն ի՞նչ էին. — Վենետկեցիք ի՞նչ մնաս հասուցին Օսմանցոց. — Ո՞վ էր այս միջոցին Եպարքոս. — Սուլթան Մէհէմէտ Դ. ուրիշ որո՞ց հետ պատերազմեցաւ. — Ո՞ր քաղաքը պաշարեց. — Ե՞րբ և ի՞նչպէս առնուեցաւ Կրետէ կղզին. — Ո՞րչափ ատեն թագաւորեց Սուլթան Մէհէմէտ Դ. :

## ՍՈՒԼԹԱՆ ՍԻԼԷՅՄԱՆ Բ.

(Թ. Հ. 1099 — Թ. Ք. 1687)

Սուլթան Մէհմեմէտի յաջորդեց իւր եղբայրը Սուլթան Սիւլէյման Բ. : Իր դահաւկալութեան միջոցին՝ Նէնիչէրիք՝ մայրաքաղաքին մէջ սոսկալի խռովութիւն մը հանեցին : Աւսարիա կը գրաւէ Հէրսէք, Պօսնա և Մաճառիտանի մէկ մասը, մինչդեռ Վենետիկեցիք՝ կրետէ կղզին կորուստը վախարհներու համար՝ Մուայի կը տիրեն :


Սուլթան Սիւլէյման այս ընդհանուր շփոթութեան մէջ կը դիմէ Քէօփրիւլիւներու ա՛յն նշանաւոր գերդաստանին աջակցութեան որ՝ Սոքոյլուներու նման՝ քանի քանի անդամներ Օսմանեան պետութիւնն վտանգներէ ազատած էր : Այս անգամ ալ Քէօփրիւլիւղատէ Մուսթափա փաշա Մեծ Նպարքոսութեան պաշտօնն ընդունելով՝ նախ Նէնիչէրիները կը զօպէ և ապա ընտիր բանակ մը կազմաւորելով կը քալէ Աւսարիայուց դէմ և վերատին ետ

կ'առնէ Օսմանցիներուն կորուսած բոլոր  
երկիրները :

Սուլթան Սիւլէյման Բ. մեռաւ 3 տարի  
թագաւորելէ յետոյ :

### Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՞վ յաջորդեց Սուլթան Մէհմէտ Գ. ի . —  
Իր գահակալութեան միջոցին ի՞նչ դէպք պա-  
տահեցաւ մայրաքաղաքին մէջ . — Եւրոպա-  
կան մասին մէջ Օսմանցիք ի՞նչ երկիրներ կո-  
րուսին . — Ո՞ր նշանաւոր վէպիրը այս շար-  
եաց դարման տարաւ . — Սուլթան Սիւլէյման  
ո՞րչափ ատեն թագաւորեց :



### Ս Ո Ւ Լ Ք Ա Ն Ա Յ Մ Է Տ Բ .

(Թ. Հ. 1102 — Թ. Ք. 1690)

Սուլթան Սիւլէյմանի եղբայրն էր Սուլ-  
թան Ահմէտ Բ. որու ժամանակ Աւստրիա-  
ցիք նախորդ Սուլթանին օրով իրենց կո-  
րուսած երկիրները ձեռք ձգելու նպա-  
տակաւ Օսմանցւոյ դէմ պատերազմի ե-  
լան : Ծերունի վէպիր Մուսթաֆա փաշան  
երկրորդ անգամ Գանուբն անոյաւ և Սա-



շանխարհնի քով թշնամիին դէմ արիա-  
բար կռուելու ատեն՝ գնտակի հարուած է  
մը սպաննուեցաւ : Իր մահը բովանդակ  
բանակին վհատութիւն ազդեց, այնպէս որ  
Օսմանցիք անյաջող վերագործան ի Պոլիս :

Այս ձախուղութեան վրայ վենետկեցիք  
յարմար առիթ գտնելով՝ Հէրսէքի և Քրիստ  
կզզիին կը տիրեն :

Սուլթան Ահմէտի իշխանութեան ժամա-  
նակ էր որ Կ. Պոլսոյ մէջ երկու ահաւոր  
հրդեհներ պատահելով՝ քաղաքին մէկ  
երրորդ մասը մութիւր դարձաւ :

Սուլթան Ահմէտ թագաւորեց 4 տարի :

### Z A R B A R A N

Սուլթան Սիւլէյման Բ. ի ո՞վ յաջորդեց. —  
Ո՞րոց դէմ պատերազմ բացաւ Սուլթան Ահ-  
մէտ Բ. — Ի՞նչ հետեւանք ունեցաւ այս պա-  
տերազմը. — Ո՞ր անուանի վէզիրը մեռաւ. —  
Վենետկեցիք ի՞նչ ըրին. — Սուլթան Ահմէտի  
օրով Կ. Պոլսոյ մէջ ի՞նչ պատահեցաւ. — Ինքն  
ո՞րչափ ատեն թագաւորեց :

## ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՍԹԱՖԱ Բ.

( Թ. Հ. 1106 — Թ. Ք. 1622 )

Սուլթան Ահմէտի յաջորդեց իր արիա-  
սիրտ և հայրենասէր որդի ին Սուլթան Մուս-  
թաֆա Բ. որու առաջին և գլխաւոր հոգն  
եղաւ՝ իր նախորդ ին օրով եղած վնասները  
դարմանել : Այս նպատակաւ՝ յամաքային  
և ծովային պատերազմաց մեծամեծ պատ-  
րաստութիւններ տեսնելով՝ նախ Քիոս  
կղզին ու Թրմշվար քաղաքն վենետկեցի-  
ներուն ձեռքէն առաւ : Ռուսոց և Լէհաց  
դէմ ալ քանի մը անգամ պատերազմե-  
լով՝ զանոնք Օսմանեան երկիրներէն վա-  
նեց :

Այս առաջին յաջողութիւններէ քաջա-  
լերուած՝ Սուլթան Մուսթաֆա 1697 ին  
45,000 զօրաց բանակով ճամբայ ելաւ է-  
տիրնէէն դէպ ի Մաճառիստան :

Օսմանցւոց այս յառաջխաղացութիւնն  
իմանալով՝ Աւստրիացիք ալ 50,000 զօրք  
համախմբած էին Թէիս կամ Թիցա գետին  
մօտ : Իրենց հրամանատարն էր՝ Սափոյացի  
իշխան և անուանի ռազմագէտ՝ Եւզինէոս :

Սուլթանին բանակը հաշիւ թէիս գեան  
անցնելով յաշոյ արուելու զբազած էր՝ երբ  
թշնամիք՝ յանկարծակի Օսմանցւոյ վրայ  
յարձակելով՝ զանոնք ամէն կողմէ կը պա-  
շարեն և կը սկսին սոսկալի մնաս հասցնել :

Այս աղէտալի օրուան մէջ Օսմանցի-  
ները շատ մարդ կորսնցուցին, որոնց մէջ  
կը գանուէր մանուանոց Մեծ Եպարքոս  
Քէօփրիւլի երկրորդ Մուսթաֆա փաշա :

Սուլթան Մուսթաֆա այս ճախորդու-  
թենէ փոխանակ վհատելու՝ անմիջապէս  
կրկին անդամ Քէօփրիւլիներու յեղէն  
Հիւսէյին փաշան Եպարքոս անուանեց՝ ա-  
նոր յանձնելով շարունակել պատերազմը :  
Սակայն Վէզիրը խոհեմութիւն սեպեց վերջ  
տալ թշնամութեանց և Սուլթանին հա-  
ւանութեամբ 1699 ին Մաճառիստանի  
Քարշովիչ գիւղին մէջ խաղաղութիւն կըն-  
քուեցաւ : Այս դաշնագրութեամբ Աւս-  
տրիացւոյ կ'անցնէր Մաճառիստան և Թը-  
րանսիլվանիա, Վենետիկցիները աէր կ'ըլ-  
լային Մուայի և Տալմացիայի, իսկ Էէհե-  
րու կը մնային Ուքրանիա և Փոտոլիա գա-

Լաւուները : Այս առթիւ քանի մը ինքնօրէն իշխանութիւններ ալ Օսմանցւոց հարկատուութենէ ազատ կ'ըլլային :

Այս դաշնագրութենէն ետքը, Սուլթան Մուսթաֆա, խաղաղութեան շնորհիւ՝ սկսաւ ներքին բարեկարգութեան հոգտանիլ և հոյակապ ու հասարակաց օգտակար շէնքեր կառուցանել : Սուլթան Մուսթաֆա մասնաւորապէս քաջալերեց տեղական արուեստներն ու ձեռագործերը : Իւր օրով սկսան Պրուսայի, Հալէպի, Իամասկոսի և Պաղատաի մետաքսէ նսրբարեւելեան ճաշակով գործուած քներ եւրոպա փոխադրուիլ :

Սուլթան Մուսթաֆայի ժամանակ Կ. Պոլսոյ Քրանսական դեսպանն էր Ֆրիուլ, և Աւետիք Արքեպիսկոպոս՝ Տաճկաստանի Հայոց Պատրիարք էր :

Սուլթան Մուսթաֆա թաղ աւսրեց 9 տարի :

### Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՞վ յաջորդեց Ահմէտ Բ.ի. — Ինչ բնութեան տէր էր Մուսթաֆա Բ. — Ո՞ր կղզին ու քաղաքն առաւ Վենետիկցիներուն ձեռքէն.

— Աւսարիացիներուն դէմ մղած պատերազմը  
ի՞նչ հետեւանք ունեցաւ. — Ո՞րն է Քարլովիչի  
դաշնադրութիւնը. — ի՞նչ բարեկարգութիւն-  
ներ բրաւ. — Ի՞ր օրով ո՞ր նշանաւոր անձինք  
կը գանուէին Կ. Պոլսոյ մէջ. — Ո՞րչափ թա-  
գաւորեց :

---

### ՍՈՒԼԹԱՆ ԱԶՍԷՏ Գ.

(Թ. Հ. 1115 — Թ. Ք. 1793)

Սուլթան Մուսթաֆայի յաջորդեց իր  
եղբայրը Սուլթան Ահմէտ Գ. որ աշխար-  
հաշէն և ուսումնասէր թագաւոր մ'էր :  
Ինքն ալ իր եղբօրը օրինակին հետեւե-  
լով՝ շարունակեց հոգ տանիլ իր հպա-  
տակներուն բարօրութեանն ու ներքին  
բարեկարգութեան : Չարաչար սլամթեց  
Եէնիչէլիները՝ որոնք իր նախորդին ժա-  
մանակը անկարգութեանց սլամճառ ե-  
ղած էին :

Ասկից ետքը Սուլթան Ահմէտ ձեռք  
զարկաւ երկրաշարժներու և հրդեհներու  
սլամճառաւ մայրաքաղաքին աւերակ  
դարձած մասերը զերանորոգել և նորա-

հոր յիշատակաշուններ կանգնել, Սակայն  
ստիպուեցաւ իր այս շինութիւնները կիւ-  
կատար թողլով՝ զէնքի դիմել, որով-  
հետեւ հայն միջոցին Մեծն Պետրոսի հրա-  
մանատարութեան ներքեւ ռուսական բա-  
նակ մը Օսմանեան երկիրները մտնելով՝  
հետզհետէ յառաջ քալելու վրայ էր :  
Սուլթան Ահմէտ Պաշրաճը Մուսթաֆա  
փաշան դրկեց Ռուսաց դէմ, որ Մեծին  
Պետրոսի բանակը պաշարելով յաղթանա-  
կը տանելու վրայ էր՝ երբ կատարինէ  
թագուհին միջնորդութեամբ՝ յանձն ա-  
ռաւ կնքել Փրութի դաշնագրութիւնը՝ ո-  
րով Օսմանեաներուն կը մնար Աղախու  
բերդը :

Սուլթան Ահմէտ վենետիկցիներուն հետ  
ալ պատերազմելով՝ անոնց ձեռքէն առաւ  
Մոռան և Յոնիական կղզիները : Սակայն  
վենետիկցիները երեք տարի ետքը Աւս-  
տրիացիներուն հետ միանալով՝ յաջողե-  
ցան իրենց կորսնցուցած երկիրները վե-  
րըստին ձեռք ձգել : Դարձեալ չյուսահա-  
տեցաւ Սուլթան Ահմէտ, և այն պահուն՝  
երբ իր թշնամեաց դէմ հորէն պատերազ-

մի կը պատրաստուէր՝ Անգլիա ըստեկա-  
մարար միջնորդելով՝ 1718ին Բասարովից  
քաղաքին մէջ կնքուեցաւ խաղաղութեան  
դաշնագիր մը՝ որուն զօրութեամբ Աւս-  
տրիա տէր կ'ըլլար Պէլլրատ և Թըմըշովայ  
քաղաքներուն: Վենետիկցիներուն կը թող-  
ուէր Ալպանիան և Յոնիական կղզիները,  
իսկ Մոռան՝ Օսմանցիներուն պիտի մնար:  
Ասիոյ կողմը Պարսից հետ մղած պա-  
տերազմէն ետքը Սուլթան Ահմէտ պաշ-  
տաւորեցաւ հաշտութիւն ընել:

Առաջին անգամ այս Սուլթանին օրով  
է որ Չէշեպի Մէհէմէտ էֆէնտին ի Փա-  
րիզ Օսմանեան դեսպան գացած է:

Սուլթան Ահմէտ թագաւորեց 27 տարի:

### Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՞վ յաջորդեց Սուլթան Մուսթաֆա Բ.ի. —  
Ի՞նչ եղաւ իր առաջին գործը. — Ռուսաց դէմ  
ի՞նչու պատերազմ հրատարակեց եւ զո՞վ զըր-  
կեց անոնց դէմ: Ո՞ւր եղաւ պատերազմը. —  
Որո՞ւ միջնորդութեամբ եւ ո՞ւր հաշտութիւն  
կնքուեցաւ. — Վենետիկցիներուն ու Աւստրի-  
ացիներուն հետ ի՞նչ պատերազմներ ունեցաւ.  
— Պարսից հետ ըրան պատերազմին արդիւնքը

ի՞նչ եղաւ. — Այս Սուլթանին օրով ի՞նչ կարեւոր նորութիւններ տեղի ունեցած են :

## ՍՈՒԼՔԱՆ ՄԱՀՄՈՒՏ Ա.

(Թ. Հ. 1143 — Թ. Հ. 1731)

Սուլթան Ահմէտի եղբորորդին և մեծաշէն ու բարեօիրտ վեհապետ մ'էր Սուլթան Մահմուտ Ա. : Թագաւորական գահը ելածին պէս, առաջին գործը եղաւ բնաջինջ ընել խռովարար Եէնիչերեաց պարագլուխները, որոնք ամէն Սուլթանի գահակալութեան միջոցին՝ ծանր ծանր պահանջումներ ընելով մեծ աղմուկ և շփոթութիւն կը յարուցանէին :

Սուլթան Մահմուտի ժամանակակից էր Պարսից Նատըր Շահը : Այս պատերազմատէր վեհապետը ուզելով Օսմանեան Սուլթանին հետ չափուիլ՝ եկաւ Պաղտատ քաղաքը պաշարելու : Սուլթան Մահմուտ անոր վրայ զրկեց անուանի սպարապետ Թօփալ Օսման փաշան որ՝ քաղաքը պաշարումէ ազատելով՝ Նատըրի զօրքերուն ստակալի



Չարդ մը տուաւ և մնացեալն ալ հալածեց : Այս դէպքէն երեք տարի ետքը, Պարսիկները օգուտ քողելով Օսմանցիներուն Եւրոպայի մէջ զբաղած վիճակէն՝ յանկարծ եկան վերստին պաշարել Պաղտատը : Օսման փաշա սակաւաթիւ զօրքով արիաբար պատերազմած ասե՛ն՝ վերաւորուելով մեռաւ : Սուլթան Մահմուտ նորէն Ասիա զօրք զրկելու կը պատրաստուէր, սակայն Ռուսաց և Աւստրիացաց իր Եւրոպական երկիրները ասպատակելին լսելով՝ Պարսից հետ հաշտութիւն ըրաւ՝ Պաղտատը, Վրաստանն ու Արեւելեան գաւառներուն մէկ մասը անոնց թողլով : Սուլթան Մահմուտ ապա քալեց իր դաշնակից թշնամիներուն դէմ՝ որոնք արդէն Վալաքիան, Մօլտավիան և Սերպիան զըրաւած էին : Օսմանցիները կը յաջողին վանել թշնամի բանակները իրենց երկիրներէն և կը շարունակեն հալածել մինչեւ Փրութ : Այս անգամ ալ Ֆրանսայի միջնորդութեամբ, պատերազմող տէրութեանց մէջ հաշտութիւն կնքուեցաւ, որով Օսմանցիները իրենց կորսնցուցած երկիրներուն

վերստին աէր կ'ըլլային և Ռուսիա յանձն  
կ'առնէր Ազախու վրայ գանուած ամրոյ-  
ները քանդել և Սեւ ծովու վրայ պատե-  
րազմական նաւ չհանել:

Սուլթան Մահմուտի օրով վաճառակա-  
նութիւն և արուեստներ շատ ծաղկեցան:  
Ինքն շինել առաւ Պէոյիւք Տէրէի մէջ  
այն մեծամեծ ջրշէղջներն որոնցմէ խողո-  
վակներու միջոցաւ մինչեւ Բերա և Ղալա-  
թիա ջուր կուգար: Նոյնպէս շինեց Թագ-  
սիանի ջրաբոշխական կեդրոնն որ այժմեան  
Տերգոսի ջրուղիներէն շատ աւելի մեծ  
կարեւորութիւն ունէր նոյն ժամանակին  
համար:

Սուլթան Մահմուտ թագաւորեց 25  
տարի:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՛վ յաջորդեց Սուլթան Անմէտ Գ.ի. —  
Եէնիշէրիները ի՞նչպէս պատժուեցան. — Ո՛վ էր  
իր ժամանակակից Պարսից Շահը. — Ինչո՞ւ  
պատերազմեցաւ Պարսից հետ և զո՞վ զրկեց  
անոնց վրայ: Երկրորդ անգամ Պարսիկները  
ի՞նչպէս գրաւեցին Պաղտաար. — Եւրոպական մա-  
սին մէջ ո՞ր տէրութեանց դէմ յաղթանակ տա-  
ւան

րաւ. — Ո՞ր տէրութեան միջնորդութեամբ պատերազմող ազգաց մէջ հաշտութիւն եղաւ եւ ի՞նչ պայմաններով. — Ի՞նչ երեւելի շինութիւններ ըրած է. — Ո՞րչափ թագաւորեց:



## ՍՈՒԼԹԱՆ ՕՍՄԱՆ Գ.

(Թ. Հ. 1168 — Թ. Ք. 1754)

Սուլթան Մահմուտի յաջորդեց իր եղբայրը Օսման Գ. 57 տարեկան հասակին մէջ: Ասոր օրով պատահեցաւ (1756) Կ. Պոլսոյ մէջ Ճիպալիի այն ահաւոր հրդեհը՝ որ շարունակ 36 ժամ տեւելով՝ Մայրաքաղաքին կէսէն աւելին մոխիր դարձուց: Այրեցան 9300 տուն 1000է աւելի խանութներ, 600 շաղացք, 75 բաղնիք, հարիւրաւոր մզկիթներ, 10 մեծ խան, եկեղեցիներ եւ այլն:

Սուլթան Օսմանի օրով քաղաքական կարեւոր դէպք մը չէ պատահած:

Սուլթան Օսման թագաւորեց 3 տարի:

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՞վ յաջորդեց Սուլթան Մահմուտ Ա.ի —  
Օսման Գ.ի ժամանակ ի՞նչ մեծ աղէտ տատա-  
հեցաւ մայրաքաղաքին մէջ. — Ո՞րչափ թա-  
ղաւորեց:



ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՍԹԱՖԱ Գ.

(Թ. Հ. 1171 — Թ. Ք. 1761)

Սուլթան Օսմանի յաջորդեց եղբայրը  
Մուսթաֆա Գ. աղնուասիրտ և ժողովըր-  
դասէր թաղաւորը՝ որու առաջին և գլխա-  
ւոր հոգը եղաւ տէրութեան ելեւմուտքը  
կանոնաւորել, բարեկարգել գաւառները  
և խաղաղութեան շնորհիւ երջանկացնել  
իր ժողովուրդը: Իր Վէզիրն էր անուանի  
Բաղըպ փաշան: Սակայն դժբաղդաբար  
պատահեցան այնպիսի դէպքեր, որոնք  
արգելք եղան մեծանձն Սուլթանին այս  
բարի դիտաւորութիւններուն: Ռուսերը՝  
Վէհերու անկախութիւնը պաշտպանելու  
պատրուակով՝ սկսած էին անոնց ներքին  
խնդիրներուն միջամտել և տակաւ Օս-

մանցւոյ զօրքը վանել եւրոպայէն : Սուլթան Մուսթաֆա պատերազմ հրատարակեց Ռուսաց դէմ , որոնք գրաւեցին Մուտավիան ու Վաղարքիան : Արշիպեղազոսի մէջ ալ Օրլոֆ ծովակալին հրամանատարութեան ներքեւ Ռուսական նաւատորմը Քիոսի մօտ արիւնալի ծովամարտէ մը յետոյ տիրացաւ կղզիին և Լէմնոսը պաշարեց : Հոս վրայ հասաւ Օսմանեան նաւատորմը՝ ձեզայիրլի Հասան փաշայի հրամանատարութեան ներքեւ և Ռուսական նաւերէն շատերն այրելով 700ի չափ ալ մարդ սպաննեց և Լէմնոսն առաւ : Յաջորդ տարին՝ Ռուսերը վերստին Դանուբը կ'անցնին և գրաւելով Բազարճըզ , Հէրսովա և Սիլիստրէ քաղաքները՝ կը յառաջանան մինչև Վառնա : Թէև Աւստրիոյ և Բրուսիոյ միջնորդութեամբ՝ պատերազմող տէրութեանց ներկայացուցիչները Փոքշանի մէջ հաշտութեան համար բանակցութեան կը մտնեն , սակայն Ռուսիոյ անհեթեթ պայմաններն անընդունելի ըլլալով Սուլթանին վերստին պատերազմի պատրաստուած ժամանակ՝ կը մեռնի 16 տարի թագաւորելէ յետոյ :

Հ Ա Ր Ց Ա Ր Ա Ն

Սուլթան Օսման Գ. ի ո՞վ յաջորդեց . — Ի՞նչ  
բարեկարգութեանց ձեռնարկեց Մուսթաֆա Գ.  
— Ո՞վ էր իր վեզիրը . — Ռուսաց դէմ ինչո՞ւ  
պատերազմ բացաւ . — Ի՞նչ եղաւ այս պատե-  
րազմին հետեւանքը . — Ո՞վ էր ձեզայիրլի  
Հասան փաշա և ո՞ր կղզին ազատեց Ռուսաց  
ձեռքէն . — Սուլթան Մուսթաֆա ինչո՞ւ չհա-  
ճեցաւ խաղաղութիւն ընել Ռուսաց հետ . —  
Ո՞րչափ թագաւորեց :



ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ-ՀԱՄԻՏ Ա.

( Թ. Հ. 1187 — Թ. Ք. 1773 )

Սուլթան Մուսթաֆայի եղբայրն էր Ապտ-  
իւլ-Համիտ Ա. որ կայսերական գահն ելա-  
ծին պէս վերստին պատերազմ բացաւ Ռու-  
սաց դէմ՝ որոնց բանակին վերին հրամանա-  
տարներն էին Ռումանյոֆ և Սուվառօֆ երե-  
ւելի զօրապետները : Սակայն մէկ կողմանէ  
երկարատե պատերազմաց պատճառաւ Օսմ.  
բանակին տկարութեան. միւս կողմանէ Եէ-  
նիշէրեաց անվերջ ստահակութեան և ան-  
կարգութեան երեսէն՝ Սուլթանը չյաջողե-

լով ակնկալուած արդիւնքը ձեռք բերել ,  
պարտաւորեցաւ Պուլկարիոյ Քիւչիւք Գայնարձա  
քաղաքին մէջ 1774ին կնքել խա  
ղաղութեան դաշնագիր՝ մը որու զօրու  
թեամբ Վալաքիա և Մուլտավիա կ'ըլլային  
Օսմանցւոյ հարկատու ինքնօրէն իշխանու  
թիւններ : Ռուսք Ալախու բերդը , Կէրչ ,  
Վրաստան և Բարատաղ իրենց ձեռքը  
կ'անցընէին , և արտօնութիւն կ'ունենային  
Սև ծովու վրայ պատերազմական նաւ հա  
նել : Բայց միւս կողմանէ Ռուսները պիտի  
թողէին Արշիպեղապոսի կղզիները :

Այս դաշնագրութենէ 3 տարի յետոյ՝  
Սուլթան Համիտ Ա. մեռաւ 16 տարի թա  
գաւորելէ յետոյ :

### Հ Ա Ր Ց Ա Ր Ա Ն

Սուլթան Մուսթաֆա Գ. ի ո՞վ յաջորդեց .  
— Ապտ-Իւլ-Համիտ Ա. ինչո՞ւ վերստին պատե  
րազմ բացաւ Ռուսաց հետ . — Որո՞նք էին  
Ռուսական զօրաց հրամանատարները . — Ինչ  
պատճառներով յաղթուեցան Օսմանցիք . — Ո՞ր  
թուականին կնքուեցաւ Քիւչիւք Գայնարձայի  
դաշնագրութիւնը և ինչ էին անոր գլխաւոր  
պայմանները . — Սուլթան Ապտ-Իւլ-Համիտ Ա.  
ո՞րչափ ատեն թագաւորեց :



## Մ Ա Ս Ն Ե .

ՍՈՒԼԹԱՆ ՍԷԼԻՄ Գ. ԷՆ ՄԻՆՉԵԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻԻԼ  
ՄԷՃԻՏԻ ՄԱՅԸ

## ՍՈՒԼԹԱՆ ՍԷԼԻՄ Գ.

( Թ. Հ. 1203-1277 — Թ. Ք. 1788-1860 )

Սուլթան Ապտ-Իւլ-Համիտ Ա. ի յաջորդեց Սուլթան Մուսթաֆայի որդին Սուլթան Սէլիմ Գ. որ խոհական և բարեկարգիչ թագաւոր մ'եղաւ : Ինք բնութեամբ խաղաղասէր ըլլալուն՝ և տեսնելով երկարատև պատերազմաց պատճառաւ տէրութեան կրած վնասներն , ուղեց իր դրացիներուն հետ հաշտութիւն ընել : Այս նպատակաւ 1790ին նախ Աւստրիոյ հետ Ձիշթովի դաշնագրութիւնը կնքեց Լէոբոլտկայսեր հետ, և 1792ին, ալ Եաշի մէջ Ռուսիոյ հետ հաշտութեան դաշինք դրաւ, որով անոր կը թողուր Խրիմ թերակղզին և Պետարապոլիոյ մէկ մասը :

Այս հաշտութիւններէն 6 տարի յետոյ՝ 1798ին, Փրանսացի տիեզերահռչակ զօրավար՝ Նաբոլէոն Պոնափարթ 40,000 զօրաց



բանակով Եգիպտոս արշաւեց, Ալեքսան-  
դրիան առաւ և մի քանի օր յետոյ Բրզանց  
մօտ՝ Մէսըութներու դէմ մեծ յաղթու-  
թիւն մը տանելով՝ մտաւ ի Գահիրէ : Ան-  
կից Սուրիա անցնելով՝ տիրեց Աքեա բեր-  
դաքաղաքին : Սակայն Ֆրանսացւոց իշխա-  
նութիւնը Եգիպտոսի և Սուրիոյ մէջ շատ  
քիչ տեւեց : Մէկ կողմանէ Օսմ. զօրաց  
ընդդիմութիւնը և մանաւանդ Անգլիաց-  
ւոց ահաւելի թշնամութիւնը պարտաւորե-  
ցին Ֆրանսացիները քաշել իրենց զօրքը  
Օսմանեան երկիրներէն և Սուլթանին հետ  
հաշտութիւն ընել :

Սուլթան Սէլիմ ուզեց սանձի ներքե  
առնել Եէնիչերեաց զօրագունդն : Այս  
նպատակաւ՝ Եւրոպայէն զինուորական ար-  
ուեստին ուսուցիչներ բերել տալով՝ սկսաւ  
նոր և կանոնաւոր բանակ մը կազմակեր-  
պել Նիզամը ճէսիս անունով : Սակայն  
կատաղի Եէնիչերիք, որոնց ականջին շատ  
գէշ կը հնչէին օրէնք և բարեկարգութիւն  
բառերը, սաստիկ զայրանալով այս նորու-  
թեանց դէմ, միահամուռ գլուխ քաշեցին  
և իրենց պարագլուխ ընտրելով Գապագնը

Մոռարաժա անուն կատաղի անձն, հաւաքուեցան էթ-Մէյճանիի հրապարակը, ուսկից խումբ խումբ ցրուելով քաղքին մէջ, սկսան ձերբակալել և սպաննել բոլոր այս նորութեանց կուսակիցները: Հաղարուոր անձինք անոնց անգթութեան զոհ դացին, նոյն իսկ Նիզամը ձէտիտի զինուորներէն շատեր՝ Եէնիչերեաց ձեռքն իյնալով սպանուեցան:

Այս Սուլթանին օրով Կ. Պոլսոյ մէջ Եւրոպական դրութեամբ հաւարան, Թնդաճօթարան, Զինուորական ու Երկրաչափական վարժարաններ և այլ նմանօրինակ կարեւոր հաստատութիւններ հիմնուելով՝ տակաւ կատարելութեան հասան: Սուլթան Սէլիմ թագաւորեց 19 տարի:

### Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Սուլթան Ապտ-Իւլ-Համիտ Ա. ի ո՞վ յաջորդեց. — Սուլթան Սէլիմ Գ. ի գլխաւոր փափաքն ի՞նչ էր. — Ո՞ր տէրութեանց հետ և ի՞նչ պայմաններով հաշտութիւն ըրաւ. — Նաբօլէոն Պոնաբարթ ո՞ր թուականին Եգիպտոս արշաւեց. — Ի՞նչպէս տիրեց Գահիրէի. — Պոնաբարթ Եգիպտոսէն ո՞ւր անցաւ, ո՞ր բերդին

տիրեց . — Ի՞նչ պատճառներով Ֆրանսայիք  
պարտաւորեցան Օսմանեան երկիրներէն ելնել .  
Սուլթան Սէլիմ ի՞նչ մեծ բարեկարգութեան  
ձեռնարկեց . — Եէնիչէրիք ինչո՞ւ զայրացան .  
— Ի՞նչ չարիքներ գործեցին . — Իր օրով  
Մայրաքաղաքին մէջ ի՞նչ երեւելի հիմնարկու-  
թիւններ եղան . — Սուլթան Սէլիմ քանի՞ տա-  
րի թագաւորեց :



### ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՍԹԱՖԱ Դ.

( Թ. Հ. 1222 — Թ. Ք. 1807 )

Սուլթան Համիտ Ա. ի որդին էր Մուս-  
թաֆա Դ. որ կարճ իշխանութիւն մը վա-  
րեց :

Ալէմտար ( դրոշակիր ) Մուսթաֆա փա-  
շան լսելով Մայրաքաղաքին մէջ տիրող  
անիշխանութիւնը՝ մեծ բանակով մը Էտիր-  
նէէն փութաց ՚ի Կ. Պոլիս և խռովարարնե-  
րուն պարագլուխները մահուամբ պատ-  
ժելով՝ խաղաղութիւնը վերահաստատեց :

Սուլթան Մուսթաֆա երկրին մէջ տի-  
րող զինուորական և քաղաքական ընդ-

հանուր տկարութիւնն աչքի առաջ ունե-  
նալով՝ խոհեմութիւն համարեց իր դրացի  
տէրութեանց հետ լրագրութեան դաշինք  
դնել :

Հ Ա

Սուլթան Սէլիմի ո՞վ յաջորդեց . — Սուլ-  
թան Մուսթաֆա Դ. ի՞նչպիսի ժամանակ դահն  
ելաւ . — Մուսթաֆա Բ. խոհեմութեան ի՞նչ  
դործ տեսաւ . — Ո՞րչափ թագաւորեց :

---

### ՍՈՒԼԹԱՆ ՄԱՀՄՈՒՏ Բ.

( Թ. Հ. 1223 — Թ. Ք. 1808 )

Աշխարհաչէն, մեծանձն, հաստատամիտ,  
արդարադատ և ժողովրդասէր թագաւոր  
մ'էր Սուլթան Մահմուտ Բ. որ իրաւամբ  
կոչուեցաւ Երկրորդ Հիմնադիր Օսմանեան  
պետութեան :

Սուլթան Մահմուտի առաջին դործն ե-  
լաւ Վէզիր անուանել անձնուէր Մուսթա-  
ֆա փաշան : Ապա տեսնելով որ կառա-  
վարութեան հետ ժողովրդեան ամէն դա-  
սերն՝ այլ ևս ձանձրացած են Եէնիչերեաց

անսանձ և անվերջ ծայրայեղութիւններէն,  
որոշեց կա՛մ խապառ ջնջել այս վտանգա-  
ւոր տարրն և կամ օրինաց ու կարգի հը-  
պատակեցնել: Այս նպատակաւ, նախ և ա-  
ռաջ՝ ՚ի պաշտպանութիւն տէրութեան,  
Նիզամը ձէտիտի տեղ Սէյրնէն անուն նոր  
զօրագունդ մը կազմել սկսաւ:

Նէնիչէրիք՝ Վէզիրին այս ընթացքին դէմ  
սաստիկ զայրանազով՝ անոր անձնապահ  
զօրքը ցրուելէ յետոյ՝ ապարանքը կրակի  
կուտան:

Այս ներքին խռովութիւնը զսպելէն ե-  
տե՛ս Սուլթան Մահմուտ ուղեց Եւրոպական  
տէրութեանց հետ հաշտութիւն ընել:  
Ռուսք մերժելով խաղաղասէր Սուլթանին  
այս առաջարկութիւնը, վերստին պատե-  
րազմի ելան: Բազրատիոն զօրավարն ըստ-  
ուար բանակով մը Իպրայիլ, Իամայիլ ու  
Նէրկէօյ քաղաքաց տիրելով՝ մինչ ՚ի Սի-  
լիստրէ յառաջ քալելու վրայ էր՝ երբ Ա-  
լեքսանդր Ա. իմանալով Մեծին Նաբոլէոնի  
Ռուսաստան արշաւելու պատրաստու-  
թիւնը՝ ետ կանչեց իր բանակը և 1812  
մայիս ամսոյ 2ին Պուքրէշի մէջ Օսմանցւոց

հետ խաղաղութեան դաշնագիր մը կնքեց  
որու զօրութեամբ՝ Փարսի գետն երկու  
տէրութեանց սահմանագիծ կ'որոշուէր, Օս-  
մանցիք վերստին տէր կ'ըլլային իրենց կու-  
րուսած երկիրներուն և Ռուսիա՝ Պէսարա-  
պիոյ և Գանուբի բերնին տէր կը դառնար։  
Ռուսական պատերազմն այս կերպով  
վերջանալէ յետոյ. Սուլթան Մահմուտ  
ձեռք զարկաւ ներքին բարեկարգութիւն-  
ներուն։ Վահապիք՝ որոնք Մէքքէ և Մէ-  
տինէ քաղաքացի տիրելով՝ ուխտաւորաց  
ևս մեծ նեղութիւն կուտային։ Սուլթան  
Մահմուտ ասոնց դէմ զրկեց Եգիպտոսի  
կուսակալ Գալալացի անուանի Մէհմետ  
Ալի փաշան որ քիչ ատենուան մէջ յաղ-  
թելով՝ ըմբոստներուն դիւսաւորն ալ շրջ-  
թայակապ զրկեց 'ի Կ. Պոլիս։

Սուլթան Մահմուտ ուզելով Սերպիացոց  
խռովութեան ալ վերջ տալ, անոնց առան-  
ձին իշխան մը կարգեց և ընդ գերիշխա-  
նութեամբ Օսմանցոց՝ տեսակ մ'ինքնօրի-  
նութիւն շնորհեց։

Սուլթան Մահմուտի իշխանութեան ե-  
րեքտասաներորդ տարին, այսինքն 1821ին

պատահեցաւ Մուռայի Յունաց խառնութիւնն՝ որ արդէն երկար տարիներէ հետէ պատրաստուելու վրայ էր ։

Յոյները առաջին անգամ 130ի շափնաւերով սկսան Արշիպեղագոսի և Միջերկրականի մէջ ասպատակել և Օսմանեան նաւերուն վնասել ։

Սուլթան Մահմուտ նախ զօրք զրկեց 'ի Մուլտովիա և 'ի Վալարքիա , ուր կը գըտնուէին Յունական խառնութեան մասնաճիւղերն ու տեղացիներէն ամեն տեսակ քաջալերութիւն կը գտնէին ։ Օսմանցիք այս երկիրներուն մէջ խառնարարներէն շատերը նուաճելով՝ երկիրը խաղաղեցուցին ։ Ապա Սուլթան Մահմուտ Յունաց վրայ տարմիղ մը զրկեց որ նուաճեց Քիոս կղզին ։

Յամաքի վրայ ալ Ալի և Խուրչիա փաշաներէն 'ի զատ՝ Մէհէմէտ Ալի փաշայի որդին Իպրահիմ փաշա՝ շատ տեղ Յոյները զարնելով՝ Կորնթոսի տիրեցին և պարտաւորեցին զանոնք նաւերն ասպատանիլ ։ Սակայն երբ Կրէտէի մօտ Յոյները Քարա Մէհէմէտ փաշա ծովակալին նաւն այրելով՝ նաւաստիներէն մեծ մասն ալ սպան-

նեցին, Սուլթան Մահմուտ սաստիկ զայ-  
րանալով Րէշիտ փաշային ահագին բանակ  
մը յանձնեց որ գնաց Մուայի շատ մը քա-  
ղաքներն առնելէ ետեւ՝ Միսոլոնկի բեր-  
դաքաղաքը պաշարեց։ Քաղաքացիք թէև  
արիարար երկար ատեն դիմադրեցին, սա-  
կայն սովէ բռնադատեալ՝ պարտաւորեցան  
անձնատուր ըլլալ (1824, ապրիլ 19)։  
Պաշարեալներուն մէջ կը գտնուէր Անգլի-  
այի անուանի բռնաստեղծ Լորտ Պայրըն՝  
որ այս դէպքէն քիչ յետոյ մեռաւ։ Մի-  
սոլոնկի պաշարման ժամանակ Իպրահիմ  
փաշան ալ Նավարինի, Արկադիոյ և Աթէն-  
քի տիրելով՝ Յունական խռովութիւնը մեծ  
մասամբ խեղդուած կը համարուէր։

Սուլթան Մահմուտ այս յաջողութեանց  
վրայ թէև ուրախացաւ՝ սակայն միւս կող-  
մանէ տեսնելով Նէսիչէրիներուն անտանելի  
ըմբոստութիւնը՝ արդար բարկութեամբ  
բորբոքած՝ այս անգամ հաստատապէս ու-  
րոշեց կամ բոլորովին բնաջինջ ընել զա-  
նոնք և կա՛մ զինուորական կրթութեամբ  
կանոնաւոր բանակի մը վերածել։ Ինչպէս  
միշտ՝ այս անգամ ալ Նէսիչէրիք դէմ կե-



ցան Սուլթանին այս առաջադրութեանը :  
Այն ատեն Սուլթան Մահմուտ տէրութեան  
մեծամեծներն ու աւագանին 'ի ժողով գում-  
մարելով՝ իր դիտաւորութիւնը յայտնեց  
անոնց : Որոշուեցաւ Մարգարէին նուիրա-  
կան դրոշն հանդիսապէս դուրս հանել և  
անոր ներքև հրաւիրել պետութեան հա-  
ւատարիմ հպատակներն 'ի պաշտպանու-  
թիւն երկրին և ժողովրդեան : Եէնիչէրիք  
համադուելով թէ այս անգամ անհնար պի-  
տի ըլլայ արխասիրա Սուլթանին հաստա-  
տամտութեանն յաղթել, խուռներամ վա-  
ղեցին էթ-Մէյտան իրենց զօրանոցներն  
ապաստանելու : Թնդանօթաձիգ զօրաց հը-  
րամանատար Քարա-ձէհէննէմ Սուսթա-  
ֆա փաշա, 'ի դիմաց Սուլթանին վերջին  
անգամ մ'ալ զանոնք ընդունայն հնա-  
զանդութեան յորդորելէ յետոյ, սկսաւ  
ուճաւկոծել անոնց զօրանոցներն որոնք ան-  
միջապէս կրակ առին : Եէնիչէրիք սկսան  
ամէն կողմէ խոյս տալ, սակայն թէ՛ ժո-  
ղովուրդն և թէ՛ Սուլթանին զօրքը այս փա-  
խրգտականներն հալածելով՝ սոսկալի շարդ  
տուին, այնպէս որ մի և նոյն օրուան մէջ

32,000 է աւելի եէնիչերի.ք բնաջինջ եղան  
( 1826 ) :

Այսպէս, Սուլթան Մահմուտ կատարեց  
այնպիսի գործ մը՝ որ մեծամեծ աշխարհ  
հակալութեանց հաւասար՝ և իր անունին  
ամենանշանաւոր փառքերէն մին եղաւ :

Սուլթան Մահմուտ այս ներքին կարեւոր  
բարեկարգութեամբ դրադած ժամանակ՝  
Յունական խռովութիւնը բոլորովին  
չէր վերջացած : Ուստի Եւրոպական երեք  
մեծ տէրութիւններ՝ Անգլիա, Ռուսիա և  
Ֆրանսա առաջարկեցին Սուլթանին՝ իրենց  
յանձնել նոյն խնդրոյն կարգադրութիւնն :  
Սուլթան Մահմուտ իրաւամբ մերժեց այս  
օտար միջամտութիւնը և շարունակեց վերջնապէս  
խեղդել խռովութիւնը : Նորէն 60  
նաւէ բաղկացած տորմիդ մը դրկեց 'ի Նափարին՝  
Իպրահիմ և Բաշիտ փաշաներու  
օգնութեան : Այն ատեն յիշեալ երեք մեծ  
տէրութեանց դաշնակից նաւաստորմն, Սուլթան  
Մահմուտը Յունաց հետ հաշտութեան  
պարտաւորելու համար, եկաւ 'ի Նափարին  
և Օսմանցւոց նաւերէն 40 հատը այրեց  
( 1827 ) :

Այս դժբաղդութեան լուրն առնելուն՝  
Սուլթան Մահմուտ, թէև շատ ցաւ զգաց,  
սակայն ո՛չ միայն յանձն չառաւ Յունաց  
շնորհ մ՞ընել, ինչպէս կ'առաջարկէին Եւ-  
րոպական տէրութիւնք, այլ անոնց դէմ  
պատերազմ հրատարակեց: Ուստի մէկ  
կողմանէ Անգլիական և Ֆրանսական նա-  
ւատորմերն Յունաստանի շուրերուն մէջ Օս-  
մանցւոյ դէմ պատերազմած ժամանակ,  
Ռուսաց բանակը Մէնչիքոֆ և Վարանցոֆ  
զօրավարաց հրամանատարութեամբ՝ Շուսլա  
և Սիլիստրէ բերդաքաղաքներուն տիրելով  
մինչև Ադրիանուպոլիս կը յառաջանայ,  
մինչդեռ Բասքէվիչ զօրավարն ալ Ասիոյ  
կողմն Օսմանցւոյ սահմանակից գաւառներ-  
ըը կը մտնէր: Սուլթանին սակաւաթիւ և  
նորավարժ բանակը անկարող ըլլալով Եւրո-  
պական քաջամարդ ղինուորաց դիմադրել,  
1829 սեպտեմբեր 14ին, Սուլթան Մահ-  
մուտ Ռուսաց հետ Էտիրնէի դաշնագրու-  
թիւնը կնքեց՝ որով Մուլտավիա, Վալաքիա  
և Սերպիա Օսմանցւոյ հարկատու և ընդ-  
պաշտպանութեամբ Ռուսաց, ինքնօրէն իշ-  
խանութիւններ կ'ըլլային: Յաջորդ տարին

(1830) Օսմանեան Պետութիւնը կը ճանչէր Յունաստանի անկախութիւնը :

Այս երկարատե պատերազմներէն յետոյ, Սուլթան Մահմուտ խաղաղութեանը շնորհիւ՝ սկսաւ երկրին բարեկարգութեանը հոգ տանիլ: Եւ ամէն բանէ առաջ, անհրաժեշտ համարեց տիրութեան օգտակար վարդիկ պատրաստել: Այս նպատակով՝ զանազան մասնագիտութեանց վարժարաններ հաստատեց, ուշիմ և զարգացեալ աշակերտներէն ալ շատերը՝ տէրութեան ծախքով զրկեց Փարիզ և Վիէննա, որպէս զի իրենց զինուորական, բժշկական և վարչագիտական ուսումները կատարելագործեն: Նոյնպէս արժանաւոր նախարարներ դեսպան զրկեց Եւրոպական մեծ տէրութեանց մօտ. ինչպէս Մուսթաֆա Րէշիտ փաշան Փարիզ, Ֆէթիհ Ահմէտ փաշա՝ Վիէննա, Մէհմէտ Քեամիլ փաշա՝ Պէրլին և ուրիշներ ալ Լոնտոն և Փէթերզպուրկ:

1835 ին ահաւոր ժանտախտը դարձեալ սոսկալի կոտորած կ'ընէր Մայրաքաղաքին և շրջականերուն մէջ:

Սուլթան Մահմուտի ժամանակակից ծե-  
րերը, իբրև կենդանի պատմութիւն, սըր-  
տաքուլիս օրհնութիւնով և անբաւ երախ-  
տագիտութեամբ կը նկարագրեն այս հայ-  
րագործով ու անվեհեր թագաւորին աննման  
անճնուիրութիւնը որ՝ վտանգին առջև ա-  
ւելի արիացած՝ կը մաքառէր այս ահար-  
կու ախտին գէմ՝ փրկելու համար իր սի-  
րելի վոյժովորդին կեանքը։ Սուլթան Մահ-  
մուտ բաւական չսեպեց առողջապահիկ  
սովորական միջոցներ միայն ՚ի գործ դնել,  
այլ և, այս պարբերական պատուհասին ա-  
ռաջքն առնելու համար՝ մաքրանոցներ և  
արգելարաններ հաստատեց և այսով՝ իր  
համօրէն հպատակաց անասման երախտա-  
գիտութեան վրայ մեծ իրաւունք ունեցաւ։

Սակայն քանի մը տարի յետոյ, Մէհէմ-  
մէտ Ալի փաշա օգուտ քաղելով Սուրիոյ ու  
Պաղեստինի մէջ տիրող շփոթութիւններէն,  
վերստին գլուխ քաշեց, պահանջելով որ  
Եգիպտոսի և Սուրիոյ վրայ իր ունեցած  
իշխանութիւնը յարդուոց օրդի ըլլայ։ Սուլ-  
թան Մահմուտ այս անհեթեթ առաջար-  
կութիւնը մերժելով՝ պատերազմ հրատա-

բակեց և անոր վրայ դրկեց Հաֆըզ փա-  
շան ։ Ճակատամարտը տեղի ունեցաւ Մի-  
ջագետոյ նիզիսի քաղաքին մօտ ։ Օսմանե-  
ցիք չյաջողեցան ( 1839 ) ։

Այս ճակատագրութեան գոյժը տակաւին  
Կ. Պոլիս չհասած , մեռաւ Սուլթան Մահ-  
մուտ՝ 32 տարի թագաւորելէ յետոյ ։

Բովանդակ Օսմանեան աշխարհը լայաւ  
այս մեծաշէն ու առաքինի թագաւորին  
մահուան վրայ որու ամբողջ կեանքը գը-  
թութեան , արդարութեան և ժողովրդա-  
յին բարօրութեան սահմանուած բարեգոր-  
ծութիւններու շարք մ'եղած էր ։

Սուլթան Մահմուտի օրով կ'ապրէին մեր  
աղգէն հետեւեալ նշանաւոր անձերը ։


Մահատի Առաքել Տատ Ամիրա , Տիւզ-  
եանց աղգատոհմէն՝ Գրիգոր , Սարգիս ,  
Միքայէլ , Մկրտիչ և Յակոբ Չէլչպիները ,  
Եւսուֆեան Պօղոս Պէյ և մանաւանդ Պէղ-  
ճեան Յարութիւն Ամիրան , Հայ աղղին  
անզուգական բարերարը , որոնք Վառօ-  
ղապետութեան , Փողերանոցի վերատես-  
չութեան և նմանօրինակ բարձր և փափուկ  
սլաշտօններու մէջ ամենայն հաւատարմու-

Թեամբ և արդիւնաւորապէս ծառայելով  
Տէրութեան՝ Մեծանուն Սուլթանին բարձր  
վաստահութեանն ու շնորհացն արժանացան:

### Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Սուլթան Մուսթաֆայի ո՞վ յաջորդեց . —  
Ի՞նչպիսի վեհապետ մ'էր Սուլթան Մահմուտ  
Բ. — Զո՞վ իրեն վեզիր կարգեց . — Մուս-  
թաֆա փաշան ի՞նչ մեծ բարենորոգութեան  
ձեռնարկեց . — Ո՞ր զինուորական նոր դունդը  
կազմեց . — Եէնիչերիք Մուսթաֆա փաշային  
ի՞նչ շարիք հասուցին , ի՞նչպէս մեռաւ . — Ո՞ր  
փաշաները զսպեցին Եէնիչերեաց խռովութիւնը .  
— Ասկից յետոյ ի՞նչ դէպք պատահեցաւ . —  
Ռուսերը ո՞ր քաղաքաց տիրեցին . — Աղեքսանդր  
Ա. ի՞նչ պատճառաւ պարտուորեցաւ Օսմանց-  
ւոց հետ խաղաղութիւն ընել . — Ե՞րբ և ի՞նչ  
պայմաններով կնքուեցաւ Պուքրէշի դաշնագի-  
րը . — Խռովարար Վահապիւներու դէմ զո՞վ  
զրկեց Սուլթան Մահմուտ . — Սերպիացիք ի՞նչ  
արտօնութիւններ ստացան Օսմ. Սուլթանէն . —  
Սուլթան Մահմուտ ինչո՞ւ զօրք զրկեց ի Մու-  
տաւիա և ի Վալաքիա . — Օսմանեան նաւա-  
տորմն Յուսաց ձեռքէն ո՞ր կղզին առաւ . —  
Յամաքի վրայ Յուսաց դէմ պատերազմողներն  
որո՞նք էին . — Կրեաէի մօտ Օսմանցիք ի՞նչ  
պարտութիւն կրեցին . — Միսուրնկիի բերդն

ո՞վ ու ե՞րբ առաւ . — Պաշարելոց մէջ ո՞ր երեւելի օտարական անձը կը գտնուէր . — Սուլթան Մահմուտի իշխանութեան ամենէն երեւելի գործը ո՞րն եղաւ . — Ինչո՞ւ ուզեց բնաջինջ ընել Եէնիչերիներն . — Ի՞նչ միջոցներ ձեռք առնուեցան . — Ո՞վ էր Քարա ձէհէննէմ Մուսթաֆա փաշա . — Եէնիչերիք ի՞նչ ըրին . — Ի՞նչպէս բնաջինջ եղան . — Ո՞ր թուականին պատահեցաւ այս երեւելի դէպքը . — Օսմ. նաւատորմն ո՞ւր այրեցաւ . — Սուլթան Մահմուտ այս դէպքին վրայ ի՞նչ ըրաւ . — Դաշնակից տէրութիւնք ի՞նչ դիրք բռնեցին . — Ռուսք մինչև ո՞ւր յառաջացան . — Որո՞նք էին իրենց բանակաց հրամատարները . — Ո՞ւր և ո՞ր թուականին կնքուեցաւ խաղաղութեան դաշնագիրը . — Որո՞նք էին այս նշանաւոր դաշնագրութեան պայմանները . — Սուլթան Մահմուտ ներքին ի՞նչ բարեկարգութիւններ հատուակեց . — Երկրորդ անգամ ե՞րբ զլուխ քաշեց Եգիպտոսի կուսակալը . — Ո՞րն է Նիզիպի ճակատամարտը . — Ե՞րբ մեռաւ Սուլթան Մահմուտ , իր մահն ի՞նչ ազդեցութիւն ըրաւ իր ժողովրդեան վրայ . — Մեր Ազգէն ո՞ր երեւելի անձինք կային Սուլթան Մահմուտի ժամանակ :





## ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏ-ԻՒԼ-ՄԷՃԻՏ

(Թ. Հ. 1839 — Թ. Ք. 1255)

Սուլթան Մահմուտի անդրանիկ որդին էր Սուլթան Ապտ-Իւլ-Մէճիտ, որ 18 տարեկան հասակին մէջ իր հայրենական աթոռն ելաւ :

Սուլթան Մէճիտ, իր մեծանուն հօր բոլոր ընտիր ընտիր բարեմասնութեանց ժառանգորդ և անոր աշխարհաշէն խորհուրդներուն իրագործողն եղաւ : Իր գահակալութեան ժամանակ Եգիպտական խռովութիւնը տակաւին կը շարունակուէր : Սուլթան Մէճիտ մեծամեծ պատրաստութիւններ տեսաւ այս խռովութեան վախճան տալու համար :

Միւս կողմանէ Աւստրիա, Անգղիա և Ռուսիա ևս, Սուլթանին հետ նիզակակցելով առաջարկեցին Մէհէմէտ Ալի փաշայի, որպէս զի իր վայելած առանձնաշնորհումներովը գոհ ըլլայ և զօրքը Սուրիայէն ետ կանչէ : Երբ Եգիպտոսի կուսակալը տէրութեանց այս առաջարկը մերժեց, դաշնակիցք նախ Սուրիոյ մէջ Աքեայի բերդն առ-

Ներքե ետև՝ հասան Ալեքսանդրիոյ առաջ  
ուր Մէհէմէտ Ալի փաշա գուշակելով որ  
անխոհեմ ընդդիմութեամբ մը արդէն ու  
նեցած իրաւունքներն ալ ձեռքէ պիտի  
ելնեն, յանձն առաւ ընդունիլ այն պայ-  
մաններն որք կնքուեցան 'ի Լոնտոն (1841):  
Այս դաշնագրութեամբ, Մէհէմէտ Ալի  
փաշա կ'ունենար միմիայն Եգիպտոսի փո-  
խարքայութիւնն յորդուոյ որդի, ասկից զատ,  
Չանաք-Քալէի ու Պոսֆորի նեղուցները փա-  
կուած պիտի մնային ամէն ազգաց մար-  
տանաւերուն առաջ :

Սուլթան Մէհիտի թագաւորութեան ա-  
մենէն փառաւոր գործն և Օսմանեան պատ-  
մութեան ամենակարեւոր գէպքերէն մէկը  
եղաւ Թաւիզիմաք կոչուած այն նշանաւոր  
Օրէնագրութիւնն՝ որով արդարասէրն Սուլ-  
թան Մէհիտ իր ամէն կարգի հպատակնե-  
րուն, առանց ազգութեան և կրօնի խըտ-  
րութեան, կը շնորհէր կենաց, ընչից և  
պատուոյ ապահովութիւն, արոց արդար  
բաշխում, օրինաց առջև հաւասարութիւն  
և ազատ կիրաւութիւն կրօնական իրա-  
ւանց : Սոյն նշանաւոր հրովարտակն 1839

Նոյեմբեր 3 ին հանդիսապէս կարգացուեցաւ Կիւլհանէի մէջ, 'ի ներկայութեան Եւրոպական տէրութեանց դեսպաններու, Իւլէմայից և Տէրութեան աւագանիին :

Սուլթան Մէճիտ տակաւին ներքին նըմանօրինակ բարեկարգութիւններով զբաղած ժամանակ, Ռուսիա նոր խնդիր մը հանեց : Պահանջեց Օսմանեան կառավարութենէն՝ որպէս զի զինքն Երուսաղէմի Ս. Տեղեաց և Տաճկաստանի Յունադաւան ազգերուն ուղղակի պաշտպան ըլլայ : Սուլթան Մէճիտ այս տարօրինակ պահանջումն իբրև վտանգաւոր իր տէրութեան ամբողջութեան, մերժեց և հրաման տուաւ իր Սպարապետ Էօմէր փաշային որպէս զի անմիջապէս երթայ Ռուսաց դէմ՝ որոնք մինչև Գանուբ յառաջացեր էին արդէն : Էօմէր փաշա Գալաթարը դրաւելով Օլթինիցաի քով Ռուսական զօրաց սուկալի շարդ մը կ'ուտայ : Սակայն երբ Սև ծովովրայ Ռուսք՝ Օսմանցւոց նաւատորմը կ'այրեն Սուլթան Մէճիտ կը դիմէ Անգլիոյ, Ֆրանսայի և Աւստրիոյ աջակցութեան որոնք ընդունելով Սուլթանին հրաւերն՝ ան-

միջապէս կ'սկսին Գանուբայ եղերքէն քշել  
Ռուսերն դէպ 'ի հիւսիս և Խրիմ յառա-  
ջանալ : Գաշնակից տէրութեանց նաւա-  
տորմը ամբողջ մէկ տարի կը պաշարէ Սե-  
ւասթօբօլ բերդաքաղաքը և վերջապէս կը  
յաջողի Մալաքօֆի ամրոցը գրաւել, Ռու-  
սական նաւատորմին մեծ մասն այրել և  
Սեւասթօբօլը սաստկապէս ումբակոծելով  
տիրանալ անոր : Այս յուսահատական կա-  
ցութեան մէջ՝ Ռուսիա ճարահատեալ  
պարտաւորեցաւ վերջ տալ պատերազմին  
և հաշտութիւն խնդրել :

1856 Մայիս 30 ին խաղաղութեան դաշ-  
նագիրը կնքուեցաւ Փարիզի մէջ, որով Եւ-  
րոպական մեծ Տէրութիւնք Օսմանեան Պե-  
տութեան ամբողջութիւնը կ'երաշխաւորէին,  
Պոսֆօրի և Տարտանէլի նեղուցները վերստին  
կը փակուէին ամէն տէրութեանց մարտա-  
նաւերուն առաջ, Ռուսք և Օսմանցիք Սե-  
ծովու մէջ զինուորական նաւարաններ չպի-  
տի ունենային : Իսկ Մուլտավիա, Վալաքիա  
և Սերպիա՝ Ռուսաց ուղղակի պաշտպա-  
նութենէ ազատ պիտի լինէին :

Իր իշխանութեան վերջին ժամանակները

էր որ Սուլթան Մէճիտ Լիբանանը Քրիստոնեայ կառավարչի մը ներքե՝ Արտօնացեալ կռասկալութիւն (Վիլայէթը Միւսթազի) անուանեց :

Սուլթան Մէճիտի օրով մեծ համբաւ ունէր Մուսթաֆա Րէշիտ փաշա անուանի Վէզիրն, որ իր քաղաքագիտութեամբ հանճարովի ու մեծագործութեամբ՝ Սոքուլը և Քէօփրիւլիւ երեւելի Վէզիրներու կարգն անցաւ :

Ասկից յետոյ կ'ուզան Ալի փաշա և Փուատ էֆէնտի որոնք 'ի վերջէ ո՛չ միայն Տաճկաստանի՝ այլ և համօրէն Եւրոպայի մէջ մեծ համբաւ ստացան :

Սուլթան Մէճիտի ժամանակ Օսմանեան պետութիւնն սկսաւ Եւրոպական ներդաշնակութեան մէջ մտնել և տակաւ զարգանալ քաղաքակրթութեան մէջ : Նորանոր և հոյակապ շէնքեր, ճամբաներ և կամուրջներ շինուեցան, հոյնպէս հիմնուեցան Եւրոպական դրութեամբ զօրանոցներ, հիւանդանոցներ և բժշկական ու զինուորական վարժարաններ :

Սուլթան Մէճիտ 32 տարի թագաւորելէ

յետոյ մեռաւ խաղաղութեամբ՝ իր հետ  
տաներով ամէն կարգի հպատակաց երախ-  
տագիտութիւնն ու օրհնութիւնը :

Այսպիսի մեծանուն և դժասիրտ Վեհա-  
պետի մը զաւակն է մեր արդի Սիրեցեալ  
Կայսր

Օ Գ Ո Ս Տ Ա Փ Ա Ռ Ղ Ա Զ Ի Ս ՈՒ Լ Ք Ա Ն

Ա Պ Տ - Ի Ի Լ - Հ Ա Մ Ի Տ Բ . Ի Ա Ն

Որու գահակալութիւնն այնքան բեր-  
կրառիթ և իշխանութիւնն յառաջդիմու-  
թեան նոր և փառաւոր թուական մ'եղաւ  
Օսմանեան մեծազօր Պետութեան համար :


Համօրէն Օսմանեան հաւատարիմ հպա-  
տակները կ'աղօթեն հանապազ՝ վասն թան-  
կագին կենաց և արեւշատութեան իրենց  
Առատագութ և Յառաջդիմասէր Սուլթա-  
նին :

Հ Ա Ր Յ Ա Ր Ա Ն

Ո՛վ յաջորդեց Սուլթան Մահմուտ Բ. ի . —  
Սուլթան Ապտ-Իւլ-Մէճիտ ի՞նչ ընտիր բարե-  
մասնութեանց տէր թագաւոր մ'էր . — Ե-  
զիպտական խնդիրն ի՞նչ վիճակի մէջ էր . —

Անմէտ փառան ռ՛վ էր, ի՞նչ բրաւ . — Եւրոպական ռ՛ր տէրութիւնք այս խնդրոյն մէջ օգնեցին Օսմ . Սուլթանին . — Ե՞րբ եւ ի՞նչ պայմաններով կնքուեցաւ Լոնտրայի դաշնագրութիւնը . — ի՞նչ է Թանդիմաթ ըսուածը . ե՞րբ հաստատուեցաւ . — ի՞նչ ազատութիւններ կը շնորհէր Սուլթան Մէճիտ . — Ռուսական պատերազմն ի՞նչ պատճառաւ ծագեցաւ . — Օսմ . Սպարապետն ռ՛վ էր . — Ռուսք Սեւ ծովովրայ ի՞նչ ըրին . — Եւրոպական ռ՛ր տէրութիւնք Օսմ . Սուլթանին նիզակակցեցան . — Ո՛րչափ տեւեց պատերազմը . — Իաշնակիցք ռ՛ր նշանաւոր բերդաքաղաքն առին . — Սաղաղութեան դաշնագիրն ե՞րբ եւ ի՞նչ պայմաններով հաստատուեցաւ . — Լիբանան ե՞րբ եղաւ Արսոնացեալ Կուսակալութիւն . — Սուլթան Մէճիտի օրով ռ՛ր երեւելի նախարարներ կային . — Այս Սուլթանին օրով Օսմ . Պետութեան մէջ ի՞նչ վերանորոգութիւններ եղան . — Ե՞րբ մեռաւ Սուլթան Մէճիտ եւ քանի՞ տարի թագաւորեց . — Ո՛վ է մեր արդի Սիրեցեալ Կայսրը :

Վ Ե Ր Զ




# Ը Ն Դ Շ Ա Ն Ո Ւ Ր Շ Ա Ր Ց Ա Ր Ա Ն



Ո՞ր երկիրը եղած է Օսմանցւոց նախկին հայրենիք : — Աշխարհագրական ի՞նչ ուղղութեամբ Օսմանցիք մինչեւ Պուրսա յառաջացան . — Որո՞նք եղան իրենց առաջին աշխարհակալները . — Փոքր Ասիոյ մէջ ո՞ր տէրութիւնը կար նոյն ժամանակ . — Մինչեւ Կ. Պոլսոյ առումը Օսմանցիք քանի՞ մայրաքաղաք ունեցան . — Օսմ. Պետութեան սկիզբները ո՞ր երեւելի անձերը կային . — Ո՞վ կազմեց Եէնիչերեաց զօրագունդը . — Օսմանցիք ո՞ր թուականին Եւրոպա անցան . — Արեւելեան Կայսրութիւնն ի՞նչ լիճակի մէջ էր այս ժամանակներս . — Առաջին անգամ Սուլթան տիտղոսն առնող ո՞ր լեհապետն եղաւ . — Լէնկթիմուր ո՞ր թուականին Ասիա արշաւեց . — Կ. Պոլիսն պաշարող քանի՞ Սուլթաններ կը յիշես . — Ո՞ր թուականին եւ ո՞ր Սուլթանն առաւ զԿ. Պոլիս . — Ո՞վ էր Փաթիհի ժամանակակից Յոյն Կայսրը . — Ո՞վ եղաւ Կ. Պոլսոյ առաջին Հայ Պատրիարք . — Ո՞րն է Չալտրրանի ճակատամարտը . — Օսմանցիք ո՞ր թուականին տիրեցին Եգիպտոսի , Սուրիոյ և Արարիոյ . — Առաջին անգամ ո՞ր Սուլթանն կոչուեցաւ Խալիֆե . — Սուլթան Գանուսի ի՞նչ երեւելի աշխարհակալութիւններ կատարեց . — Պէլկրաստ



ո՞ր թուականէն առնուեցաւ. — Օսմանցիք ե՞րբ  
տիրեցին Հռոդոս կղզիին . — Սուլթան Սիւ-  
լէյմանի ժամանակակից Եւրոպական ո՞ր երե-  
ւելի վեհապետները կային . — Ճէզայիր ե՞րբ  
և որո՞ւ ձեռօք Օսմանցւոց անցաւ . — Ո՞րն է  
Լէբանդի ծովամարտը . — Ե՞րբ և ո՞վ առաւ  
Կրետէ կղզին . — Առաջին անգամ Ռուսաց հետ  
պատերազմող Սուլթանը ո՞րն է . — Մեծն Պետ-  
րոս Օսմանեան ո՞ր Սուլթանին ժամանակակից  
է . — Օսմանցիք առաջին անգամ Եւրոպական  
ո՞ր տէրութեան հետ առեւտրական դաշնագիր  
կնքած են . — Յիշէ՛ մեծ գրաւումներ . — Ե-  
րեւելի ճակատամարտներ . — Երեւելի ծովա-  
մարտներ . — Երեւելի դաշնադրութիւններ .  
— Երեւելի պաշարումներ . — Յիշէ՛ Օսմ. Սուլ-  
թաններու ժամանակակից երեւելի թագաւորներ  
կամ իշխաւ Սուլթան Մահմուտ Բ. ի օրով  
ի՞նչ կարեւոր վերանորոգումներ կատարուեցան .  
— Ե՞րբ ջնջուեցան Եէնիչերիք . — Ո՞ր թուա-  
կանին հաստատուեցաւ Մաքրանոց և Արգելա-  
բան . — Սուլթան Ապտ-Իւլ-Մէճիտի օրով ի՞նչ  
մեծ բարեկարգութիւններ եղան Տէրութեան մէջ .  
— Ե՞րբ հրատարակուեցաւ Թանդիմաթն . — Ո՞ր-  
քան թագաւորեց Սուլթան Ապտ-Իւլ-Մէճիտ :



ԵՐԵՒԵԼԻ ՎԷՋԻՐՔ ԵՒ ՆԱԽԱՐԱՐՔ

**ՕՍՄԱՆՆԱՆ ՊՆՏՈՒԹՅԱՆ**

Ի Ր Ե Ն Յ Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Յ Ս ՈՒ Լ Յ Ա Ն Ն Ե Ր Ո Վ

Սուլթան Օրխան Ա. — Ալաէտաին փաշա և  
Սիւլէյման փաշա .

Սուլթան Մուրատ Ա. — Ճէնաէրէլի Գարա Խա-  
լիլ փաշա .

Սուլթան Պայազիս Ա., եւ Սուլթան Մեհեմմէս Բ.  
— Իպրահիմ, Նիշանճը Մէհէմմէտ և Խա-  
լիլ փաշաները .

Սուլթան Պայազիս Բ. — Իսկէնաէր և Ալի  
փաշաները .

Սուլթան Գանուլի Սիւլէյման — Խայրէտաին  
Պարպարոսա, Իպրահիմ և Մէհէմմէտ փա-  
շաները .

Սուլթան Մուրատ Գ. — Սոքուլու Մէհէմմէտ,  
Սինան և Օսման փաշաները .

Սուլթան Ահմէս Ա. — Գուլուճը Մուրատ և  
Գայսէրլի Խալիլ փաշաները .

Սուլթան Մուրատ Գ. — Չէրքէզ Մէհէմմէտ  
փաշա .

• Սուլթան Մեհեմմէս Գ. — Քէօփրիւլի Մէհէմ-  
մէտ և Գարա Մուսթաֆա փաշաները .

Սուլթան Սիւլէյման Բ. — Քէօփրիւլիւ-Չատէ  
Մուսթաֆա Ֆաղլը և էլմաս Մէհմէտ  
փաշաները .

Սուլթան Մուսթաֆա Բ. — Քէօփրիւլիւ-Չատէ  
Հիւսէյին փաշա .

Սուլթան Ահմէտ Գ. — Պալթաճը Մուսթաֆա  
փաշա .


Սուլթան Մահմուտ Ա. — Քէօփրիւլիւ Ահմէտ  
և Թօփալ Օսման փաշաները .

Սուլթան Մուսթաֆա Գ. — Ճէզայիրլի Հասան,  
Բաղըպ, Ղազի Օսման և Ալի փաշաները .

Սուլթան Սեյիտ Գ. և Սուլթան Մահմուտ Բ. —  
Ալէմտար Մուսթաֆա փաշա .

Սուլթան Մահմուտ Բ. — Գարա Ճէհէննէմ Մուս-  
թաֆա, Խուրչիտ, Բէշիտ, Գարա Մէհմէ-  
մէտ, Խիւսրէվ, Առնաւոլուտ Մէհմէմէտ Ա-  
լի և Իպրահիմ փաշաները .

Սուլթան Ապս-Իւլ-Մեհիտ . — Ծովակաշ Ֆիրարի  
Ահմէտ, Սպարապէտ Էօմէր, Վեզիր Բէշիտ  
փաշաները ևւայլն .









# İstanbul Belediyesi

İnkilâb Müzesi ve Kütübhanesi

Sayı:

Oda

Dolab

Raf

BB Eyüp Sultan Halk ve Çocuk Kütüphanesi



**\*ERM1021\***

255.07.02.01.06.00/

